31 ՄԱՅԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 98(4717)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## Սարգսյան-Ալիեւ tête-à-tête հանդիպո՞ւմ Կազանում

Ադրբեջանական հայտարարություններին ու լրահոսին ընդհանրապես հավատալու առանձնակի հիմքեր երբեք չեն եղել, սակայն ինչ վերաբերում է ղարաբաղյան հարցում այցելությունների, հնարավոր հանդիպումների մասին տեղեկատվությանը, ապա նման պարագաներում ադրբեջանական կողմից կազմակերպվող «արտահոսքերը», որպես կանոն, համապատասխանում են իրականությանը կամ առնվազն դեպքում հավաստիության հավակնող տեղեկություններ են պարունակում:

Հերթական անգամ ադրբեջանական կողմն է նորություն բերում լրատվական դաշտ կամ էլ փորձում է իրեն հարմար տեղեկատվությունը տեղավորել նորության տիրույթներում: Մասնավորապես Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլուն «Ազերիպրես» գործակալության մոսկովյան թղթակցին տված հարցազրույցում հայտնել է, որ հունիսին Կազանում տեղի ունենալիք Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, ինչպես նաեւ երկու երկրների նախարարների մակարդակով անցկացվելիք քննարկումը լինելու են առանձին` տետ-ա-տետ: «Այստեղ որոշակի գաղտնի հարցեր են որոշվում», տետ-ա-տետ հանդիպելու անհրաժեշտությունը այսպես է բացատրել Բյուլբյուլօղլուն:

**Ա. Հ.**

## Պետականորեն կենտրոնանում են հայության ախպասանքները` Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ

**Հ. ԱՓՅԱՆ**


ՖՈՏՈԼՈՒՐ

Հայկական երկու հանրապետությունների նախագահները, Ամենայն հայոց կաթողիկոսն ու Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսը, հանրապետության մի շարք նախարարներ, պետական պաշտոնյաներ, կուսակցությունների ներկայացուցիչներ, Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարներ, երեկ մասնակցեցին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդրանիկ նիստին, որը վարում էր նախագահ Սերժ Սարգսյանը: Հանձնաժողովը ստեղծվել է ապրիլի 23-ին նախագահի հրամանագրով: Բացման խոսքում Սերժ Սարգսյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովի նախօրոք հայտարարված կազմն ընդլայնվել է: Ընդգրկվել են նաեւ «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության տնօրենների խորհրդի տեսուչ Մարտին Եսայանն ու Հայ օգնության միության կենտրոնական վարչության ատենապետուհի Վիքի Մարաշլյանը: Հանձնաժողովի անդրանիկ նիստին մասնակցեցին 36 անդամներից 34-ը:

*Տես էջ 2*

## Համաներումը կարեւոր պայման է ժողովրդավարության հաստատման համար

Հանրապետության օրվա հանդիսությունների շրջանակում իրականացված համաներումը Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը ողջունում է, համարում իսկապես բարի կամքի դրսեւորում եւ գնահատում այն որպես կարեւոր քաղաքական քայլ, որով փորձ է արվում վերացնել թշնամանքի եւ ատելության այն մթնոլորտը, որը ձեւավորվել էր հանրապետությունում մարտիմեկյան ողբերգական իրադարձություններից հետո:

Արմենական-ՌԱԿ-ը կարեւորում է նաեւ իշխանություն-ընդդիմություն երկխոսությունը, ինչը երկրում քաղաքական առողջ մթնոլորտի, արժանավոր մշակույթի եւ ժողովրդավարական արժեքների ձեւավորման կարեւորագույն պայմաններից մեկն է: Սա նաեւ կարեւոր քայլ է երկրում հանդուրժողականության միջավայրի ստեղծման եւ քաղաքական պայքարը քաղաքակիրթ մակարդակի բարձրացնելու համար:

Արմենական-ՌԱԿ-ը բոլոր ակտիվիստների ազատ արձակումը բանտերից եւ հետագայում քաղաքական հետապնդումների բացառումը կարեւոր պայման է համարում Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության ու խոսքի ազատության հիմնարար սկզբունքների ներդրման համար:

**Արմենական-ՌԱԿ**
**Հանրապետական վարչություն**



## Հրայր Հովնանյանի բաց նամակը Ջերի Կաֆեսջյանին

***«Ազգ»-ի ընթերցողները ծանոթ են դատական այն ցավալի վեճին, որը ծագել էր Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության թանգարանի սեփականության իրավունքի շուրջ Ամերիկայի հայկական համագումարի եւ բարերար Ջերարդ Կաֆեսջյանի միջեւ: Հայտնի է նաեւ ամերիկյան դատարանի վճիռը, որի արդյունքում թանգարանի շենքը պատկանում է Ջ. Կաֆեսջյանին, որին ուղղված բաց նամակով ստորեւ հանդես է գալիս համագումարի նախագահ, բարերար Հրայր Հովնանյանը:***

**Ջերի,**

**Երբ հետադարձ հայացք եմ նետում այն տարիներին, որոնք վատնվեցին Հայոց ցեղասպանության թանգարանի եւ հուշահամալիրի (Armenian Genocide Museum and Memorial-AGMM) ու Ամերիկայի հայկական համագումարի դեմ քո նախաձեռնած դատավարությունների արդյունքում, ապա տեսնում եմ, որ այժմ դու հայտնվել ես նույն այն տեղում, ինչ 2006 թվականին, երբ ամբողջովին վերահսկում էիր նախագիծը: Այն ժամանակ Ցեղասպանության թանգարանի խորհրդի մյուս անդամներն իրենց քվեարկությամբ լուռ համաձայնեցին քո նախագծին. դրա գրավոր ապացույցը քո ձեռքերում է:**

**Ես որոշեցի դիմել քեզ այս բաց նամակով` ողջ դատավարության ընթացքում լուռ մնալուց հետո, անգամ այն պարագայում, երբ դու օգտագործեցիր քո լրատվական աղբյուրները դատավարության ընթացքում իմ մասին կեղծ փաստեր եւ չարակամ հոդվածներ շարունակաբար տարածելու համար:**

**Ինչպես բազմիցս նշել եմ, իմ ներգրավված լինելը նախագծում պայմանավորված է այն խորին հավատով, որ մեր երկրի մայրաքաղաքում Ցեղասպանության թանգարան կառուցելը վեհ եւ ազնիվ մղում է համայն ողջ հայ ժողովրդի:**

**Այժմ, այդքան համառ պայքարից հետո, երբ ողջ սեփականությունը եւ հետեւաբար նաեւ նախագծի նկատմամբ լիակատար հսկողությունը քո ձեռքում է, ես հուսով եմ, որ դու իսկապես մտադրված ես օգտագործել այն Հայոց ցեղասպանության թանգարան կառուցելու համար, ինչպես խոստացել ես դատավորին եւ հայ ժողովրդին: Ես հուսով եմ նաեւ, որ նախագծին չի սպառնա նույն ճակատագիրը, որին արժանացավ մինչ օրս չիրականացված Երեւանում արվեստի թանգարանի ստեղծման քո մեծ գաղափարը, եւ որ դու էլ ավելի շահագրգռված կլինես ավարտին հասցնել 200 միլիոն ԱՄՆ դոլարի Ցեղասպանության թանգարանի ստեղծումը, ինչի մասին այդքան հաճախ խոսել ես:**

**Չնայած դատավարության ժամանակ չցանկացար երաշխավորել, որ այս սեփականությունը կօգտագործվի բացառապես թանգարանի կառուցման նպատակով, դու պարտավորված ես հայ ազգի առջեւ ի սկզբանե հաստատված գաղափարով եւ առանց որեւէ պայմանների կառուցել Ցեղասպանության այս թանգարանը: Եթե դու պատրաստ ես սա երաշխավորել, ես միգուցե կկարողանամ համոզել բոլոր շահագրգիռ կողմերին` չդիմել բողոքարկման:**

**ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆ**

## Օծվեց Դոնի Ռոստովի Սբ Հարություն եկեղեցին



Մայիսի 29-ի Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը մեկնել է Դոնի Ռոստով, որտեղ հանդիսապետել է Սուրբ Հարություն նորակառույց եկեղեցու օծման արարողությունը: Այս մասին տեղեկացանք Մայր աթոռի տեղեկատվական համակարգից: Սբ Հարություն եկեղեցին կառուցվել է պատմական Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում: Վերջինս քանդվել էր 1965-ին: Նշենք նաեւ, որ Սբ Հարությունը կառուցվել է Կարապետյան ու Ղազարյան ընտանիքների բարերարությամբ` ի հիշատակ Սահակ Կարապետյանի վաղամեռիկ որդու: Եկեղեցու ճարտարապետն է Միխայիլ Սարգսյանը:

Ամսի 29-ին կատարվել է նորակառույց եկեղեցու օծման արարողությունը, ապա Վեհափառ հայրապետը մասուցել է պատարագ: Նույն օրը երեկոյան Վեհափառ հայրապետը վերադարձել է Մայր աթոռ:

**Ի. Պ.**

## Գերմանիան վերջնականապես հրաժարվեց ատոմային էներգիայից

Երկուշաբթի առավոտյան Գերմանիայի կառավարությունը վերջնական որոշում է ընդունել ատոմային էներգիայից իսպառ հրաժարվելու վերաբերյալ: Հաստատված ծրագրի համաձայն, երկրում գործող 9 ատոմակայանները կանգնեցվելու են մինչեւ 2022 թվականը: Այդ մասին հաղորդում է «Դոյչե Վելլե» ռադիոկայանը:

Գրեթե 12 ժամ տեւած նիստից հետո կառավարության որոշումը հրապարակել է շրջակա միջավայրի նախարար Նորբերտ Ռոտգենը: Նրա խոսքերով, նախատեսվում է 6 ատոմակայան լիովին կանգնեցնել 2021-ին, մնացյալ 3-ը` 2022-ին:

Այժմ արդեն չգործող 8 ատոմակայանների աշխատանքը չի վերսկսվելու: Դրանցից յոթը շատ հին են` կառուցվել են 1980-ից առաջ: 2011-ի մարտին դրանց շահագործումը դադարեցվեց ճապոնական «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ի վթարից հետո: Իսկ ութերորդը` «Կրյումմելը», 2009-ին` կանգնեցվել էր նորոգման նպատակով:

Գերմանիայի էլեկտրաէներգիայի կարիքների 22 տոկոսն ապահովում են ատոմակայանները, նշում է Ֆրանսպրեսը: Ռեակտորների փակմանը զուգընթաց շահագործման կհանձնվի 9 գազային էլեկտրակայան: Բացի դրանից, արտոնություններ կսահմանվեն վերականգնելի աղբյուրներից «կանաչ» էներգիա արտադրողների համար: Շրջակա միջավայրի նախարարության նախագծի համաձայն, դա հնարավորություն կտա էկոլոգիական էլեկտրաէներգիայի բաժինը ներկայիս 17-ից հասցնել 35 տոկոսի:



Ատոմային էներգետիկայից ճարահատյալ հրաժարվելու որոշումը ներհակ է կանցլեր Անգելա Մերկելի նախընթաց ծրագրերին: Մասնավորապես 2010-ին կառավարությունը չեղյալ էր հայտարարել նախորդ կանցլեր Գերհարդ Շրյոդերի ծրագիրը, ըստ որի գերմանական ատոմակայանները պետք է փակվեին մինչեւ 2022 թվականը: Գտնելով, որ տվյալ ժամկետն անբավարար է այլընտրանքային էներգետիկայի լիարժեք զարգացման համար, Մերկելը որոշել էր ատոմակայանների շահագործումը երկարաձգել մինչեւ 2035 թվականը:

Սակայն կառավարությունը ստիպված փոխեց իր ծրագրերը «Ֆուկուշիմա-1»-ի վթարից հետո, որը միջազգային սանդղակով գնահատվում է որպես վտանգի բարձրագույն մակարդակ:

# Նախագահի մրցանակը` լավագույններին

«Ինձ համար ակնհայտ է, որ մրցանակներն ավելի շատ պետք են ոչ թե ստացողներին, այլ` Հայաստանի հանրությանը: Արժանավոր գործերի ու մարդկանց մասին մեր հասարակության լայն շերտերը պետք է իմանան առաջին հերթին բարձր գնահատականների շնորհիվ: Մրցանակներով ի ցույց ենք դնում եւ վերահաստատում մեր չափանիշները, ակնկալիքներն ու արժեքային համակարգը: Քաջ գիտակցում ենք, որ գիտնականը կամ արվեստագետը մրցանակ ստանում է կոնկրետ գործի համար, բայց որպեսզի նա այդ գործն անի, նրանից երբեմն պահանջվում է մի ամբողջ կյանք: Նա այդ թռիչքին մասնագիտորեն եւ հոգեբանորեն պատրաստվում է երկարուձիգ տարիներ, ապրում որոնումների, հիասթափության եւ ոգեւորության բազում պահեր»:

Այսպես սկսեց իր ելույթը Հայաստանի Հանրապետության նախագահ **Սերժ Սարգսյանը** հանրապետության նախագահի 2010 թ. մրցանակի շնորհման արարողության ժամանակ: 2001-ից անցկացվող հանրապետության նախագահի մրցանակին արժանացել է 184 անհատ. նրանցից 13-ը` միջազգային: Այս տարի մրցանակակիր դառնալու հայտ էին ներկայացրել 200 մտավորական: Լավագույնի տիտղոսին արժանացել են 23-ը: Նախագահի մրցանակին արժանացան ֆիզիկայի, բժշկագիտության, արվեստի, կինոյի, բնական գիտությունների ոլորտում իսկայական ներդրում ունեցած մտավորականներն ու գիտնականները:




Իսրայելի Հոլոքոստի թանգարանի հիմնադիր տնօրեն **Իսրայել Չարնին** Հայաստանի բարեկամների թվին է պատկանում: Նա միշտ եղել է հայ ժողովրդի կողքին եւ զգալի աշխատանք կատարել Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ: Մի առիթով նա ներողություն է խնդրել հրեա բոլոր այն գիտնականների անունից, ովքեր մերժում են Հայոց ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության հիմնահարցի ուսումնասիրության, միջազգային ճանաչման, ժխտողականության խնդրի ուղղությամբ կատարած ծավալուն եւ արժեքավոր հետազոտությունների համար նախագահի մրցանակ ստանալու համար Երեւանում է նշանավոր ցեղասպանագետը: Նա հավաստիացնում է, որ մրցանակը կնպաստի իր ակադեմիական հետագա հետազոտություններին: «Հետազոտում եմ Հայոց ցեղասպանության ժխտման հիմնային գործընթացը, որը նաեւ նշանակում է Հոլոքոստի, բոսնիական ցեղասպանության, Կամբոջայում տեղի ունեցած ցեղասպանության ժխտումը: Բոլորս` հայերը, հրեաները, սեւերն ու սպիտակները, ունենք մեկ հիմնական խնդիր, դադարեցնել ցեղասպանությունները: Շատ ուրախ եմ, որ ներդրում ունեմ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Հայոց ցեղասպանության մասին խոսվում է մամուլում, հեռուստատեսությամբ, ֆիլմերում: Ամոթալի կերպով մենք կորցրել ենք տարիներ, քանի որ մեր կառավարությունը չի ճանաչել այն` ելնելով որոշակի պրակտիկ շահերից: Չեմ կարծում, որ այդպես կարելի է շարունակել», ասաց Չարնին: Նա կարեւորեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը քննարկվելու է Քնեսեթի կրթության հանձնաժողովում, այլ ոչ արտաքին գործերի գործերի կամ անվտանգության հանձնաժողովներում: Ցեղասպանագետը կարծում է, որ դա հուսադրող զարգացում է, քանի որ կրթության հանձնաժողովն աշխատում է ոչ թե փակ, այլ հրապարակային: Վերջում Չարնին հույս է հայտնում, որ «աշխարհը ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը»:

**Անդրանիկ Պետրոսյանի** եւ **Արմեն Վարդանյանի** «Աչքի ցանցենու պաշտպանական համակարգում տաուրինի եւ տաուրեսի դերի բացահայտումը» աշխատությունը միջազգային ճանաչում է ստացել: Մասնագետների կարծիքով, բնակչության 3 տոկոսը տարիներ անց կտառապի կուրությամբ: Այստեղ իր ազդեցությունը կունենա ոչ միայն ժառանգաբար հիվանդության փոխանցումը, այլեւ բարձր տեխնոլոգիաների վնասակար ազդեցությունը: Հայ բժիշկները գտել են բանաձեւ` ինչպես վերականգնել տեսողությունը: Կենսաքիմիայի ինստիտուտի աչքի հետազոտության լաբորատորիայի վարիչ Անդրանիկ Պետրոսյանն ընդգծում է, որ 10 տարվա աշխատանքից հետո հաջողվել է ցույց տալ աչքի ցանցենու պաշտպանիչ մեխանիզմներից մեկը, որը հիմնված է տաուրինի ամինոթթվի վրա:

«Տաուրինը կիրառելով, մեզ հաջողվել է ավելի արդյունավետ բուժել շաքարախտով տառապող մարդկանց տեսողությունը: Առ այսօր 800 անձի բուժումն ընթացել է ավելի հաջող»:

Գրականության բնագավառում լավագույնն էր ԼՂՀ Գրողների միության նախագահ **Վարդան Հակոբյանի** «Պոեմ իմ մասին կամ` 24 անց 81 րոպե» ստեղծագործությունը:

Հումանիտար գիտության զարգացման բնագավառում լավագույն աշխատությունը **Արգամ Այվազյանի** «Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը» վեցհատորյակն էր: Այվազյանին հաջողվել է Նախիջեւանի հայկական հսկայական ժառանգությունն ամփոփել գրքի հատորներում:

Այս տարի երգեցողության բնագավառում մրցանակակիրներ չկային: Երգեցողության հանձնախմբի անդամ **Հասմիկ Հացագործյանի** գնահատմամբ` նախորդ տարիներին ձեռք բերած բարձր նշաձողին համապատասխան թեկնածու չի եղել:

Կարեւորելով երիտասարդների դերը պետության կայացման գործում` նախագահը շեշտեց, որ այսօր բազմաթիվ տաղանդավոր երիտասարդներ արժանանում են նախագահի մրցանակին: «Կցանկանայի նրանց հիշեցնել, որ երիտասարդական մրցանակները ողջ աշխարհում հույսի մրցանակներ են եւ ինչ-որ տեղ կանխավճար այն գործերի համար, որ ապագայում նրանք կարող են եւ պետք է ստեղծեն: Դուք` որպես մրցանակակիրներ, լինելու եք ավելի մեծ ուշադրության կենտրոնում, իսկ դա ենթադրում է ավելի մեծ պատասխանատվություն», ասաց Սարգսյանը` հավաստիացնելով, որ բազմաթիվ պահեր դեռ առջեւում են:

Դաշնակահար **Արմեն Մանասյանը** նախագահի երիտասարդական մրցանակի դափնեկիրն է` դասական երաժշտության բնագավառում «Գործիքային կատարում» անվանակարգում:

«Ուրախ ենք ձեր հաջողությունների համար, հպարտ` դրանցով: Նախ եւ առաջ ձեզնով է, որ մենք այսօր ապրող, զարգացող ժամանակակից ժողովուրդ ենք եւ ձեզնով եւ ձեր գործերով օր օրի կաթիլ-կաթիլ դառնալու ենք ավելի լավը», եզրափակեց իր խոսքը նախագահ Սարգսյանը: Միջոցառման ավարտին էլ խմբակային լուսանկար նախագահի հետ` որպես գեղեցիկ հուշ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՏՈՒՅՑ Է ՍԱՐԿՈԶԻԻ ԳԱԼԸ

# Դովիլյան հայտարարությունը` ուժեղ ու առանց երկիմաստության

**Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի Հայաստան այցելության մասին ՀՀ ԱԳՆ հաղորդագրությունն, ըստ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյի, «բավականին ստույգ էր»: Այսպիսին էր Ֆրանսիայի դեսպանի արձագանքը ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնում տեղի ունեցած ասուլիսում հնչած հարցին, թե ե՞րբ է Հայաստան այցելելու կամ արդյո՞ք այցելելու է Ֆրանսիայի նախագահը, եւ ի՞նչ այցելության շրջանակներում նա կլինի Երեւանում:**

**ՆԱՏՕ-Ֆրանսիա երկարաշունչ ու գրեթե 50 րոպե տեւած ներկայացումից հետո Անրի Ռենոն առանձնակի հարցերի էլ չպատասխանեց` բավարարվելով այն հայտարարությամբ, թե դա օրվա թեմային չի առնչվում կամ էլ դեսպանական իր լիազորություններին չի վերաբերում:**

**Ամեն դեպքում, լրագրողների խնդրանքով անդրադառնալով վերջերս ֆրանսիական Դովիլում Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի նախագահների կողմից «Մեծ ութնյակի» երկրների ղեկավարների հանդիպման շրջանակներում արված հայտարարությանը, որ վերաբերում էր ԼՂ-ի հարցին, դեսպան Ռենոն ընդգծեց, որ այդ հայտարարությունը բավականին ուժեղ էր, առանց երկիմաստության: «Հաստատ համոզված եմ, որ երկու կողմերն էլ հասկացել են այդ ուղերձը», ասաց Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը` մոռանալով, որ նույն այդ դովիլյան հատարարության մեջ ոչ մի «երկու կողմ» հասկացություն չի օգտագործվել, այլ միայն` «կողմեր»:**

**Ա. Հ.**

# Արմեն Եգանյանը` Կանադայում ՀՀ դեսպան

**Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Կանադայում ՀՀ դեսպան է նշանակվել Արմեն Եգանյանը, նստավայրը` Օտտավա: Եգանյանը ծնվել է 1968-ին Թբիլիսիում: Լենինգրադի եւ Երեւանի պետական համալսարանների պատմության ֆակուլտետների շրջանավարտ է: 1996-97-ին աշխատել է Ռուսաստանում ՀՀ դեսպանության հյուպատոսական բաժնի 3-րդ քարտուղար, այնուհետեւ` ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության 3-րդ քարտուղար: 2002-03-ին ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետն էր, 2003-06-ը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության խորհրդականն էր, այնուհետեւ` մինչ այժմ, ՀՀ ԱԳՆ-ի Ամերիկայի վարչության պետ:**



**Հ. Ա.**

# Է. Շարմազանով. «ՀՀԿ-ն ոչ թե ներողություն է խնդրում, այլ ներում է»

**«Այս քաղաքական գարունը շահեկանորեն տարբերվեց վերջին քաղաքական գարուններից նրանով, որ այստեղ ե՛ւ ընդդիմությունը (խորհրդարանական եւ արտախորհրդարանական), ե՛ւ իշխանությունը մեծ ջանքեր գործադրեցին Հայաստանում երկխոսության, համերաշխության եւ հանդուրժողականության մթնոլորտ ձեւավորելու ուղղությամբ», ասաց ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը` գարունը քաղաքական առումով թեժ, սակայն կառուցողական եւ համերաշխության մթնոլորտի ձեւավորմանը միտված անվանելով. «Երկրի ղեկին կանգնած է հումանիստական արժեքներ կրող անձնավորություն, մարդ, որը պետականամետ գաղափարների կրողն ու ջատագովն է, որի համար ամենակարեւորը երկրի կայուն եւ անցնցում զարգացումն է», ասաց Շարմազանովը` նշելով նախագահի կատարած կարեւորագույն քայլը դեռ ապրիլի 27-ին, երբ նա, որպես քաղաքական իշխանության ղեկավար, ներքաղաքական իրավիճակի լիցքաթափմանն ու քաղաքական նոր մշակույթի ձեւավորմանն ու զարգացման քայլեր իրականացնելու պատրաստակամություն հայտնեց եւ մայիսին համաներում հայտարարեց: Է. Շարմազանովն ընդգծեց, որ այդ քայլերը արտախորհրդարանական գործընկերները նույնպես դրական են գնահատել. «Առաջին նախագահը դրական գնահատեց այս փուլը` համարելով, որ բաց երկխոսություն է ընթանում, ավելին` նշելով, որ այն չպետք է ընդհատվի»:**

**Լրագրողները հետաքրքրվեցին` հիմա ինչի՞ շուրջ է ՀԱԿ-իշխանություն երկխոսությունը, քանի որ ՀԱԿ-ը խոսում է արտահերթ ընտրությունների մասին: Շարմազանովը արտահերթ ընտրությունների հավանականություն չտեսավ այս պահին. «Արտահերթ ընտրություններ լինում են այն ժամանակ, երբ երկիրը քաղաքական ճգնաժամ է ապրում: Իսկ մեր երկրում այդպիսի իրավիճակ չկա», ասաց նա` հավելելով, որ երկիրն էլ քայլեր է անում դեպի ժողովրդավարություն: Սասուն Միքայելյանն ու Նիկոլ Փաշինյանը ազատ արձակվելուց հետո մի շարք գնահատականներ էին հնչեցրել, հատկապես Ս. Միքայելյանը նշել էր, թե թո՛ղ Հանրապետականը ներողություն խնդրի. «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն արտահայտելու իրավունք, բայց այդ կարծիքը չպետք է անցնի էթիկայի սահմաններից: Ինչ վերաբերում է ներողություն խնդրելուն, ապա ՀՀԿ-ն ոչ թե ներողություն է խնդրում, այլ ներում է», ասաց Շարմազանովը:**

**Մ. Խ.**

# Եժի Բուզեկը ողջունել է Միքայելյանի եւ Փաշինյանի ազատ արձակումը

**Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը ողջունել է ինչպես Սասուն Միքայելյանի եւ Նիկոլ Փաշինյանի ազատ արձակումը Հայաստանում, այնպես էլ Էյնուլա Ֆաթուլաեւի ազատ արձակումը Ադրբեջանում` անվանելով «անկասկած ճիշտ քայլ` ճիշտ ուղղությամբ» կատարվածը: Նա հույս է հայտնել, որ երկու երկրներում էլ երկխոսությունը, ԶԼՄ-ներում բազմակարծության տարածումը կամրապնդվեն, կընդլայնվի քաղաքացիական հասարակության կառուցողական ներգրավվածությունը. «Իմ վերջին այցելությունը Հարավային Կովկաս մեծ հնարավորություն էր` ուժեղացնելու երկխոսությունը, եւ ես կարողացա հստակ արտահայտել Եվրոպական խորհրդարանի դիրքորոշումը մարդու իրավունքների եւ ժողովրդավարության խնդիրների վերաբերյալ: Մեր բաց եւ արդյունավետ մտքերի փոխանակման ժամանակ ես շեշտել եմ, որ մեր հարաբերությունները ունեն հեռանկար` որպես նոր շունչ ստացած «Արեւելյան գործընկերության» մի մաս», ասել է նա:**

# Երեւանի բանուկ խաչմերուկներում տեսախցիկներ են տեղադրվում

Երեւանի բանուկ խաչմերուկներում եւ կանգառներում տեղադրվում են տեսախցիկներ: Դրանց թիվը կհասնի 60-ի: Ըստ քաղաքապետարանի մամուլի ծառայության` հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ քաղաքապետ **Կարեն Կարապետյանը** հանձնարարել է գործընթացն ավարտելուց հետո մոնիտորինգ սկսել եւ մշտական վերահսկողություն իրականացնել:

Չգործող եւ ապօրինի կրպակների ապամոնտաժումը շարունակվում է. 11 վարչական շրջաններում իրականացված գույքագրմամբ գրանցվել է այդպիսի 636 կրպակ: Առաջիկայում գույքագրման աշխատանքները կավարտվեն նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Քաղաքապետը հանձնարարել է շարունակել ապօրինի կրպակների ապամոնտաժումը:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայ դատը մեր ընդհանուր դատն է

Նրա կուսակցությունը Ավստրալիական Միության Նոր Հարավային Ուելսի պառլամենտում, ինչպես այստեղ գրում են թերթերը, 2011 թվականի ապրիլին փայլուն հաղթանակ տարավ: Եվ նա, ինչպեսեւ սպասվում էր, նշանակվեց տրանսպորտի նախարար: Նա ընթերցողին արդեն հայտնի մեր հայրենակցուհի **Գլեդիս Բերեջիկլյանն** է: Ավստրալիայի Լիբերալ կուսակցության ակտիվ եւ հեղինակավոր անդամը նախարարների կաբինետ եւ պառլամենտ մտավ, ինչպես ասում են՝ ոչ դատարկ ձեռքերով: Դեռեւս 2003 թվականից էր նա Լիբերալ կուսակցության կողմից ընտրված Նոր Հարավային Ուելսի պառլամենտ: Արդեն այն ժամանակ նա երեք տարի նաեւ ստվերային կաբինետի նախարարն էր: Շուտով դարձավ պառլամենտական հասարակական կոմիտեի անդամ՝ բնակչության հոգեկան առողջության, երիտասարդական խնդիրների, օնկոլոգիական հիվանդությունների եւ էթնիկական հարցերի լուծման գծով:

Գլեդիսի կենսագրությանը ես մանրամասն ծանոթացել եմ, ինչպես արդեն ասել եմ, «Ամարաս» հրատարակչության «Հայուհիներ» հանրագիտական երկհատորյակից: Հիշեցնեմ, որ այդ պարզապես եզակի հանրագիտարանը մեզ շատ է օգնում ծովարշավի ընթացքում: Ցավոք, ձեռքիս ընդամենը մեկ հատոր ունեմ (ավելի ճիշտ՝ միակ նմուշային օրինակը): Ողջ տպաքանակի հրատարակման համար լրացուցիչ միջոցներ են հարկավոր: Եթե որեւէ մեկն արձագանքի (կամ արձագանքեն), ապա բառացիորեն մեկ ամսվա ընթացքում պատրաստ կլինեն երկու հատորն էլ, որոնց անհամբեր սպասում է մեր հասարակայնությունը: Բանն այն է, որ հրատարակչության տնօրեն **Արկադի Ասրյանը** սկզբունքայնորեն հրաժարվել է իր հերոսուհիների օգնությունից, համարելով, որ դա բարոյապես ճիշտ չէ: Իսկ այդ հերոսուհիները մեր մոտ հազար երկու հարյուր հայրենակցուհիներն են՝ բոլոր հինգ աշխարհամասերից: Հիշեցնեմ նաեւ, որ հրատարակչական աշխատանքների ավարտական փուլն անցկացնելու գործում հիմնական օգնությունը ցուցաբերել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Երկրորդը:

...Եվ ահա Սիդնեյում «Արմենիա»-ի անձնակազմի հայրենակիցների հետ հանդիսավոր հանդիպմանը ելույթ ունեցավ տրանսպորտի նախարար Գլեդիս Բերեջիկլյանը, որը հենց տեղում էլ մեզ հրավիրեց պառլամենտ՝ պաշտոնական ընդունելության:

Հանդիպումը տեղի ունեցավ մայիսի 4-ին, նոր պառլամենտի աշխատանքի հենց առաջին օրը: Կարողացել էր ժամանակ գտնել, խոստովանելով, որ անհրաժեշտության դեպքում նիստի ամբիոնից ելույթ կունենա, հենց կանչեն իրեն: Բարեբախտաբար դրա անհրաժեշտությունը չեղավ, եւ մենք լիուլի խոսեցինք շատ բաների մասին: Հայ համայնքի խնդիրների մասին՝ դպրոց, եկեղեցի, ցեղասպանություն ու շատ այլ հարցեր: Քառասունհազարանոց համայնքը միակն է Ավստրալիայում, որը հնարավորություն չունի հայկական հեռուստատեսություն դիտել:

Պառլամենտի տանիքին մի իսկական այգի-ծաղկանոց է գցված: Հենց այնտեղ էլ խաչքար է տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Իհարկե, դա նախաձեռնել եւ անմիջական օգնություն է ցուցաբերել Գլեդիս Բերեջիկլյանը:

Անձնակազմը հանդիպում ունեցավ եւս մեկ հայտնի պաշտոնյայի հետ: **Արթին Էթմեկջյան**: Բավական խոշոր Ռայթ քաղաքի քաղաքապետն է, որտեղ ապրում են մոտ տասը հազար հայեր: Հայրենակիցների ահա այսպիսի քանակը եւ Սիդնեյում գտնվող միակ գործող եկեղեցուց հարաբերական հեռավորությունը արդեն բարձրացնում են Աստծո նոր տան շինարարության հարցը: Հուզված էր Արթինը, երբ ասաց. «Ժամանակն է եկել նոր եկեղեցի կառուցելու»: Դարերի ընթացքում «եկեղեցի» հասկացությունը հայերի մոտ անպայման զուգորդվել է դպրոցի հետ: Որպես մի ինչ-որ ամբողջություն: Եվ հիմա էլ Ռայթի քաղաքապետի աշխատասենյակում խոսք բացվեց դպրոցի մասին: Խոշոր, ծանր ու ամրակազմ եւ բարի աչքերով Արթինը վաղուց է մտմտում նաեւ դպրոց կառուցելու գաղափարի շուրջ:

Տես էջ 5

# Աղանդավորներն անգամ այլընտրանքային ծառայությունից են խուսափում

2005 թվականից առ այսօր Հայաստանի քաղաքացիներից, այդ թվում եւ աղանդավորները, չեն դիմել այլընտրանքային ծառայության, փոխարենը նրանք նախընտրում են ենթարկվել քրեական պատասխանատվության: Այս մասին «Արմենպրեսին» փոխանցել է պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար **Դավիթ Կարապետյանը**՝ անդրադառնալով Հայ առաքելական եկեղեցու հոգեւորականներից մեկի բարձրացրած հարցին, թե աղանդավորներն անգամ այլընտրանքային ծառայությունից են խուսափում: Ըստ Դավիթ Կարապետյանի՝ 2004-2005 թվականներին մեր երկրում այլընտրանքային ծառայության է անցել 26 զինծառայող, որոնք, սակայն, ծառայությունից ամիսներ անց բողոքել են ու հրաժարվել ծառայելուց՝ նախընտրելով ենթարկվել քրեական պատասխանատվության:

**Ի. Պ.**

# Orange Նորարարության մրցույթի հաղթողը ԵՊՀ չորրորդ կուրսի ուսանող Դավիթ Վարդանյանն է




Orange-ը հայտարարեց հայ ուսանողների համար նախատեսված 2011թ. Նորարարության մրցույթի հաղթողի անունը: Լավագույնը ճանաչված նախագծի հեղինակը Երեւանի պետական համալսարանի ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի 4-րդ կուրսի ուսանող **Դավիթ Վարդանյանն** է, որը ներկայացրել էր նախագիծ էլեկտրոնային քվեարկության վերաբերյալ: Որպես մրցանակ՝ Դավիթը ստացել է հնարավորություն մեկնելու Ֆրանսիա՝ 6-ամսյա վճարվող պրակտիկայի Orange-ի գիտահետազոտական լաբորատորիաներից մեկում, եւ աշխատելու նորարարական նախագծերի վրա:

«Մենք բոլորս հիացանք Դավթի հետաքրքրասեր բնավորությամբ: Նա այն ուսանողներից է, ովքեր չեն բավարարվում համալսարանական կրթության տված գիտելիքներով եւ որոնում են ավելի ու ավելի շատ գիտելիքներ: Վստահ եմ, որ այս հնարավորությունը նրա մասնագիտական կյանքում բեկումնային է լինելու: Յուրաքանչյուր ուսանողի համար՝ նույնիսկ ամենապատրաստվածի, կարիերայի ընթացքում ամենադժվար պահն անցումն է կրթությունից դեպի աշխատանք: Դավիթն իր առաջին աշխատանքային փորձն ունենալու է աշխարհի լավագույն գիտահետազոտական ցանցերից մեկում: Կրկին շնորհավորում եմ նրան այս հաջողության համար, ցանկանում եմ, որ երբեք չդադարի սովորել եւ երբեք չդադարի փնտրել նորարարական լուծումներ իր աշխատանքում», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Բարձր գնահատելով նաեւ մրցույթին մասնակցած մեկ այլ ուսանողի՝ Գեւորգ Պողոսյանի աշխատանքը եւ պատրաստվածությունը, որն ըստ ժյուրիի քվեարկության գրավել է երկրորդ տեղը, Orange Արմենիան վճռել է հատուկ մրցանակ տալ նրան՝ հրավիրելով աշխատանքային պրակտիկա անցնելու Orange Արմենիայում: Գեւորգը նույնպես ԵՊՀ-ի ուսանող է, սովորում է ռադիոֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրայում եւ ներկայացրել էր նախագիծ կարճ հաղորդագրությունների կիրառման նոր մոտեցման վերաբերյալ: Orange Արմենիան չի բացառում հետագայում նրա գաղափարի կիրառումն իր ցանցում:

Orange Նորարարության 2011թ. մրցույթն անցկացվեց Երեւանի պետական համալսարանի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) ուսանողների համար մարտի 4-ից ապրիլի 20-ը, որի ընթացքում ուսանողները ներկայացրին իրենց նորարարական գաղափարները: 11 հոգուց կազմված ժյուրին, որի կազմում էին Orange Արմենիայի հայ եւ արտասահմանցի 7 մասնագետներ, Orange Lab-երի 2 ներկայացուցիչ, ինչպես նաեւ մեկական ներկայացուցիչ ԵՊՀ-ից եւ ՀՊՃՀ-ից, գնահատեցին ներկայացված նախագծերն ըստ հետեւյալ չափանիշների. նորարարական, հետաքրքրական, օգտակար եւ հեշտ կիրառվող:



# Պետականորեն կենտրոնանում են հայության աշխատանքները՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ

*1-ին էջից*

Իր խոսքում նախագահի Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով ներկաներին, որոնք ընդունել են հանձնաժողովի անդամ դառնալու իր առաջարկը, եւ հատկապես նրանց, որոնք հատուկ այս նիստին մասնակցելու համար են ժամանել Հայաստան, նշեց. «Հայոց ցեղասպանության հարցը մարդկության դեմ գործած այդ հանցագործության 96 տարի անց դեռ բաց է բոլորիս՝ յուրաքանչյուր հայի համար»: Բաց է, քանի որ հնարավոր չէ ընկալել եւ հասկանալ թուրքական պետության կողմից իր քաղաքացիների հանդեպ ծրագրված եւ իրականացված բնաջնջման քաղաքականությունը: Բաց է, քանի որ հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրի հետեւանքները ցայսօր չեն վերացվել, չնայած իննուկես տասնամյակներին: Բաց է, քանի որ այսօր էլ կան Մեծ Եղեռն իրականացնողների ուրացող հետեւորդներ, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում հայոց պատմության այս սեւ էջը խեղաթյուրելու համար, եւ բաց է, քանի որ Մեծ Եղեռնը ուրացողները մեր ողբերգությունը դիտում են զուտ որպես միջազգային քաղաքականության մեջ իրենց համար անհարմարություններ ստեղծող երեւույթ եւ չեն ընկալում իրենց ապաշխարանքով հաշտվելու անհրաժեշտությունը», նշեց ՀՀ նախագահը:

Սերժ Սարգսյանը շեշտեց, որ մենք խաղաղ ժողովուրդ ենք եւ պատրաստ ենք որպես հավասարը հավասարի հետ, արժանապատվությամբ խոսել, այդ թվում նաեւ մեր հարեւանների. «Սակայն անկախ որեւէ բանից՝ մենք երբեք չենք հանդուրժելու Հայոց ցեղասպանության ժխտումը եւ անարգանքը մեր անմեղ նահատակների հիշատակի հանդեպ», ընդգծեց նախագահը՝ հավելելով, որ մեր ժողովուրդը շնորհակալ է բոլոր այն մարդկանց, որոնք պատմության ծանր պահին օգնության ձեռք են մեկնել՝ փորձելով պաշտպանել եւ օժանդակել մեզ. «Նրանցից ոչ մեկին մենք չենք մոռացել, իսկ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները նաեւ նրանց հիշատակը ոգեկոչելու նոր հանգրվան կլինեն», նշեց նախագահը: Ազդարարելով, որ «այսօր մենք պաշտոնապես սկսում ենք Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգելու աշխատանքները», Սերժ Սարգսյանը նշեց, որ «խաղաղություն, պատասխանատվություն, երախտագիտություն» բառերը պետք է մեզ անընդհատ ուղեկցեն ձեռնարկած գործընթացում:

Նախագահի խոսքից հետո Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ հանձնաժողովի անդամները նիստը սկսեցին Տերունական աղոթքով: Այնուհետեւ Վեհափառն ու Մեծի տանն Կիլիկո կաթողիկոս Արամ Առաջինը իրենց խոսքն ուղղեցին նիստի մասնակիցներին:

Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանձնաժողովին ներկայացրեց արտերկրում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ աշխատանքների վերաբերյալ հարցեր: Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը խոսեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի ձեւավորման եւ իրականացվող աշխատանքների համադրման վերաբերյալ հարցերից: Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը զեկուցեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման, պետական հանձնաժողովի խորհրդատվական խումբ ձեւավորելու մասին: Դեմոյանն արդեն լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ նիստի ընթացքում համապատասխան հանձնարարականներ են տրվել ՀՀ արտաքին գործերի, սփյուռքի, կրթության, մշակույթի նախարարություններին, Գիտությունների ազգային ակադեմիային: Դեմոյանի ներկայացմամբ՝ սփյուռքի հայկական կազմակերպությունները եւս պետք է Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ գործեն համատեղ: Ինչ վերաբերում է հասարակությունում տարածված այն կարծիքին, որ 100 տարին լրանալուն պես Ցեղասպանության ճանաչումն այլեւս իրավական հետեւանքներ չի կարող ունենալ, Դեմոյանը վստահեցրեց, որ միջազգային իրավունքում նման որեւէ փաստաթուղթ գոյություն չունի:




ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու, հանձնաժողովի անդամ Կիրո Մանոյանի խոսքերով՝ նիստի ընթացքում հստակեցվեց, որ աշխատանքները պետք է տարվեն հիմնականում երեք ուղղություններով՝ «ներազգային ճակատ՝ աշխատանք հայության հետ: Միջազգային ճակատ եւ աշխատանք՝ Ցեղասպանության հետեւանքների վերացման նոր փուլում»:

Հանձնաժողովի բոլոր անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները, անհատները մինչեւ աշնան իրենց գործողությունների ծրագիրը կներկայացնեն հանձնաժողովի քարտուղարություն: Հենց առաջիկա աշնանն է նախատեսված հանձնաժողովի երկրորդ նիստը, որը պետք է հստակեցնի ու ամրագրի առաջիկա 1-2 տարվա համատեղ գործողությունների ծրագիրը:

ԱԶԳ **Հանրային ծառայություններ**

Կոմունալ-կենցաղային սպասարկման հանրային ծառայությունները ձեւավորման փուլում են՝ որոշները կայացած կամ ընթացքի մեջ, իսկ մի քանիսը չեն էլ կայանալու, որովհետեւ վաղուց սպառված են: Դրանցից էլեկտրացանց ՓԲԸ-ն, «Երեւան-ջուրը», «Հայռուսգազարդ»-ը, հեռախոսային կապի օպերատորները կայացած ընկերություններ են՝ օրենսդրական համապատասխան դաշտում գործող, հստակ մեխանիզմով, բնակչության հետ պայմանագրերով հաստատված համաձայնությամբ: Ծառայության սակագնային փոփոխությունների պարագայում, նրանք տեղեկացնում են հանրությանը մամուլի միջոցով կամ հեռուստատեսությամբ, վթարային իրավիճակների կամ անսարքությունների, շինարարական աշխատանքների պատճառով ծանակի եւ նյարդերի կորուստ է տվել, բարոյապես տուժել (հարց՝ ո՞ւր են գնացել այդ մուծումները):

Նորքի 4-րդ զանգվածի Հովհաննիսյան փողոցի մի բնակչուհի 1,5 տարի առաջ հրաժարվել է աղբահանության վճարներից, երբ գումարը փոփոխված սակագնով են պահանջել. «Սակագները փոխելու պարագայում նրանք պարտավոր են բնակիչների հետ հանդիպել եւ տեղեկացնել այդ մասին: Ես չեմ պատրաստվում գումար վճարել ինչ-որ մեկին, այդպես էլ գրեցի ինձ մեկնած կասկածելի թղթի կտրոնին: Կվճարեմ, երբ նրանք ինձ հետ պայմանագիր կկնքեն, ինչպես «Հայռուսգազարդը», «Երեւան-ջուրը» եւ մյուսները: Եվ վճարումները կանեմ խնայբանկում, այլապես չեմ պատրաստվում մասնավոր ինչ-որ գրպան հարստացնել»: Իմ զրուցակից բազմաթիվ քաղաքացիներ պանվելու» ձեւը կաթոցքի տակ դույլեր դնելն էր: Մեր բնակարանի լոգարանն ամիսներ շարունակ վերեւի բնակարանից «անձրեւում» էր: Երբ վարձակալը դիմում է ԺԵԿ, ընթացք չեն տալիս, թե՝ քեզ չենք ճանաչում, տանտերը թող դիմի: Երբ ինքս եմ դիմում, առաջին հարցը վճարումների մասին է, ցուցակը շատ արագ ստուգում են եւ...՝ օ՜, ձեռքերը մի լավ շփում են. ահա եւ ծուղակն ես ընկնում: «Դուք նախազգուշացում չե՞ք ստացել»: «Ո՛չ»: «Ուրեմն, կստանաք», ասում է ձայնը, բայց արագ հիշում, որ պայմանագիր պահանջողներից ես, հետն էլ լրագրող. (բոլորի դոսյեն ունեն...) եւ ով զարմանք, մի ժամից արհեստավոր է տուն գալիս (նրանք, եւ տեսուչները նույնպես, երբեք չեն ներկայանում համապատասխան գրքույկով կամ բեջով), միայն նայում է, որովհետեւ գործը լուրջ է, այսինքն ֆինանսատար:

կել-գնացել. տանից տեղյակ չեն: Աբսուրդը՝ ծանուցումն ուղղված է տվյալ հասցեում չեղած, չգրանցված ազգանունին, այն էլ՝ որպես սեփականատեր, իրականությանը չհամապատասխանող փաստ: Այսինքն՝ անհասցե է, ուստի՝ անվավեր: Միջանկյալ նկատենք, որ վերջերս Արաբկիր համայնքից ստացված գույքահարկի վճարման ծանուցագիրը միանգամայն ճիշտ էր հասցեագրված: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես են նրանք ինչ-որ մի ժամանակ բնակիչների ընտրացուցակ կազմել... Հաշվապահական թվաբանության տակ ստորագրությունը բացակայում է, որեւէ մեկը սա չի հաստատել: Եթե ընդամենը թղթատարական այսպիսի պարզ աշխատանքը, բայց եւ՝ դատարան քարշ տալու դեպքում, նման անտեղյակ, անփույթ «պատասխանատվությամբ» է կատարվում, պատկերացնո՞ւմ եք ծա-

# Ժեկ-համայնատիրության եւ բնակչի միջեւ պայմանագրի բացակայությամբ դրամագանձումն անօրինական է դառնում

## *Դատարան քարշ տալուց առաջ, փոխեք աշխատանքային մեթոդները*

ռայության դադարեցման (օրինակ՝ ջրամատակարարման) ժամանակ նախօրոք բնակիչները տեղեկացվում են, «Երեւան-ջուրը» դա անում է նաեւ ավտոմատացված հեռախոսազանգերով: Երկկողմանի հաստատված հստակ սակագնով պայմանագրի վավերական առկայությունը երկկողմանի իրավունքներ եւ պարտավորություններ է պահանջում, վարձավճարը չմուծելու պարագայում ծառայությունը դադարեցվում է, ինչը բնական է եւ ավելի քան պարզ:

Բացի այս խոշոր կազմակերպություններից, կան նաեւ կենցաղային սպասարկում իրականացնող տարբեր ընկերություններ, ՍՊԸ-ներ՝ աղբահանություն, գույք, զանազան այլ հարկեր գրանցող: Աղբահանությունը մեր քաղաքի դժվար լուծվող խնդիրներից է: Քաղաքի կենտրոնական մասերում անգամ, օրվա տարբեր ժամերի աղբակուտակումները սովորական երեւույթ են:

Բարձրահարկ շենքերի աղբատար բունկերները հաճախ են պղնձկեպռունկ լցված լինում աղբով, եւ շենքը երկար ժամանակ նեխահոտի մեջ ներծծված է մնում: Աղբահանման կայուն սակագին սահմանված չէ, քաղաքի մի ծայրում յուրաքանչյուր անձի համար 200 դրամ են գանձում, մեկ ուրիշ վայրում՝ այլ, եւ ժամանակ առ ժամանակ փոփոխվող սակագների մասին կանոնավոր տեղեկություններ բնակիչները չեն ստանում: Դրանցով զբաղվող կազմակերպություններն անորոշ կարգավիճակում են, զանազան ՍՊԸ-ներ կան, այս խնդրով նաեւ ԺԵԿ-երն են զբաղվում, որոնք հիմա նոր անուն են ստացել՝ համայնատիրություններ. այսպիսիք աղբավճարներից բացի բնակիչներից գանձում են այսպես կոչված սպասարկման վարձավճար, սակայն ոչ առաջինի, եւ ոչ այս մյուսի համար չունեն նախապես կնքված պայմանագիր, անորոշ են ծառայության տեսակները, չկան նաեւ սակագներ: Չեն գործում վարձավճարային ընդունված մեխանիզմները՝ որեւէ փոստային բաժանմունքում վճարումներ կատարելու հնարավորություն քաղաքացին չունի, որովհետեւ դրանցից մեծ մասը բանկային հաշվեհամար չունի, ունեցողներն էլ ընդամենը մեկ կետով, եւ շատերիս համար անպատեհություն ստեղծող: Աշխատում է հին՝ սովետական մեխանիզմը, ինչ-որ մի անձ՝ լիազորված թաղապետարանի կամ ԺԵԿ-ի կողմից, հավաքում է գումարներ, ինչի հանդեպ վստահություն շատերը չունեն, քանի որ արդեն կան նախադեպեր այս եղանակով վարձավճարներից տուժածների, երբ կատարված վճարների «պատճառով» բնակիչը հայտնվում է դատական քաշքշուկի մեջ: Եվ եթե անգամ՝ համապատասխան կտրոնների առկայությամբ, դատը նա շահի, միեւնույն է, ժամա-



այս նույն հարցադրումն ունեն. եթե օրինական են այդ վճարներն ու թղթի կտրոնները, ինչո՞ւ ԺԵԿ-ը իրենց հետ պայմանագիր չի կնքում: Ուրեմն անօրինական են գանձումները եւ կոռուպցիայի հերթական որջ է դա: Կոմիտաս փողոցի մի բնակիչ պնդում է, որ շենքի սպասարկման ծառայություն, որպես այդպիսին, չեն տեսել. ավելին՝ վերանորոգչական որոշ աշխատանքներ իրենք են արել, փոխել են տանիքից իջնող ջրահեռացման խողովակները, սեփական միջոցներով մաքրել հաճախակի խցանվող կոյուղին, բետոնապատել շենքի մուտքի քանդված մասը, իսկ ԺԵԿ-ը միայն գումար պահանջելու, կամ էլ դատարանի ծանուցագիր ուղարկելու մեջ է փութաջան: Մի ուրիշ շենքում ջրատարի պտուտակը աշխատանքի ժամանակ կոտրվել է, եւ ԺԵԿ-ի պետը դրամահավաքություն է փորձել կազմակերպել՝ յուրաքանչյուր բնակչից 3000-ական դրամով: Մալաթիա-Սեբաստիա համայնքի մեկ այլ բնակչուհի հաստատում է վերը ասվածը, հավելում, որ իրենց ԺԵԿ-ը ծառայություններ մատուցում է, բայց երբեմն-երբեմն, եւ երբեք ֆինանսական հաշվետվություն՝ կոնկրետ արված գործի համար չի ներկայացնում, սակայն վարձը ամեն ամիս կանոնավոր արձանագրում եւ պարտքը հիշեցնում է:

Մեր բնակարանի ջրահոսքը կարգավորելու համար հարեւանի դիմումով եկած ԺԵԿ-ի մասնագետը փոքրիկ սեւ ռետինե օղակը փոխելու աշխատանքը 3000 դրամ գնահատեց: Քեռու փողոցի 58 շենքը Արաբկիր համայնքում է, 90-ականների կառույց է, այս շենքի ներսում ոչ դուռ, ոչ պատուհան չես տեսնի, միջանցքի առաստաղները ջրերից փայփայված, ծեփաթափված են, վերջին հարկի բնակիչը բողոքում էր, որ տարիներ շարունակ տանիքից թափվող անձրեւաջրերից «պաշտ-

Շենքի որեւէ բնակիչ, ամենաիրազեկվածն անգամ տեղյակ չէ ԺԵԿ-ի սպասարկման աշխատանքներից: Բերանացի պտտվում են տեղեկություններ՝ իբր պայմանագիր կնքած բնակիչների 51%-ի մասին, բայց ում հետ խոսում եմ՝ չգիտեն այս մասին, ովքեր են այդ 51-ը, եւ եթե կան՝ երբ եւ ում կողմից են ընտրվել եւ ինչու անհայտ են եւ մնացածները տեղյակ չեն: ԺԵԿ-ի հաշվապահն ասում է, որ ինքը աշխատում է շենքից ընտրված մեկի հետ. ո՞վ է այդ լիազորված անձը, որին մենք չգիտենք, եւ նա ինչ-որ տեղեկություններ է փոխանցում: Ստացվում է, որ առանց բնակչի գիտության, առանց պայմանագրի, չեղած կամ անորոշ ծառայությունների դիմաց որոշակի գումար է հաստատված (կամայակա՞ն, մոտավո՞ր) եւ պարտադրում են վճարել: ԺԵԿ-ը 3-4 ամիսը մեկ պարտավորվում է բնակիչներին ահաբեկել դատարանի սպառնալիքով: Որոշ տեղերում նմանաբնույթ հեռախոսային «ծառայություն» հանձն են առնում այսպես կոչված տեսուչները կամ նույնիսկ հաշվապահը: Կիեւյան 7 հասցեում տեղակայված ԺԵԿ-ի հաշվապահն, օրինակ, ոչ ավել, ոչ պակաս «ձեզ քարշ ենք տալու դատարան» արտահայտությամբ է բնակչին ահաբեկում: Մինչեւ դատարան քարշ տալը նրանք, իհարկե, ծրագիր մշակել են. նախ ծանուցագիր-նախազգուշացում են փոստով ուղարկում՝ պատճենահանած բլանկի վրա, պատճենահանած ստորագրություն-կնիքով, կից հաշվապահական ինչ-որ թղթով, որի անհասկանալի թվաբանությունից գլուխ չես հանի: Գրված է ձեռագրով. տարեթվեր, ամսաթվեր-դիմացը՝ թվեր. շատ անորոշ է, որովհետեւ այս տարիներին փոխված սակագները միայն իրենց է հայտնի, բնակարանում գրանցված անձերի փոփոխություններ են կատարվել, մարդ է ե-

ռայության այն որակը, որ «մատուցվում» է շենքերին, եթե մատուցվում է, իհարկե:

Նախազգուշականը՝ միակողմանի բովանդակությամբ, միայն իրենց շահերին է հետամուտ. բնակիչը, որ համատիրության անդամ է ներկայացված, տեղյակ չէ, երբվանից է այդպիսին, նշված չէ, թե ամսավճարը ո՞ր ծառայության դիմաց է գանձվում. «պարտադիր նորմերի իրականացմանն ուղղված» ձեւակերպումը շատ անորոշ է: Անստորագիր թվաբանական հաշվեթղթի փոխարեն կամ դրան կից պետք է ներկայացնել մատուցված կոնկրետ ծառայության մասին հաշվետվություն, ըստ որում այդ մասին տեղեկացնել պետք էր ժամանակին եւ ստանալ վավերացում մեր կողմից: Այլ խոսքով՝ աչքներս պետք է տեսնի:

Երբ փորձում ես ԺԵԿ-ի պետից պարզաբանումներ ստանալ պայմանագրի բացակայության եւ դրամավճարային չաշխատող մեխանիզմի մասին, նա կտրուկ արձագանքում է, թե՝ 50-60.000 բնակիչ է սպասարկում եւ ամեն մեկին հեռախոսով պատասխանելու ժամանակ չունի: Իսկ ֆիզիկապես ընդունելու ժամանակ ունի՞: Կարծում ենք՝ այո՛: Ժամանակ կա, անշուշտ, բլանկների խուրձ պատրաստելու եւ բնակչին ուղարկելու, ընդ որում այս դեպքում աշխատում են ժամանակակից մեթոդով, փոստային առաքումով: Այս նույն քաղաքակիրթ մեխանիզմով ինչո՞ւ դրամավճարների գանձում չեն ապահովում՝ ինչպես մյուս ծառայությունները փոստային բոլոր բաժանմունքներում, իսկ վերջին տարիներին արդեն՝ էլեկտրոնային ճանապարհով:

Քաղաքային իշխանությունները տեղյա՞կ են արդյոք XXI դարում հանրային սպասարկման այսպիսի մեթոդներից եւ մեխանիզմներից: Կարծում ենք՝ այո, այլապես մի առիթով ԺԵԿ-երը չէին համարի մեռած մարմին: Իսկ մեռած մարմինը երկար չեն պահում, որովհետեւ նեխում է: Այս հարցը վաղուց քաղաքային կյանքի խոցերից մեկն է եւ լուծում է պահանջում: Հանրային, այն էլ՝ այսպիսի մասշտաբային, ամբողջ բնակչությունն ընդգրկող ծառայությունը պետք է օրենսդրորեն հստակ կանոնակարգված լինի, մշակել է պետք քաղաքացիների հետ քաղաքակիրթ հարաբերություններ՝ երկկողմանի պայմանագրով, սահմանված սակագներով եւ վճարման ընդունված մեխանիզմներով:

Ակնկալում ենք քաղաքային իշխանությունների արձագանքը: Բնակիչները պատրաստ են վճարումներն իրականացնել, եթե սպասարկում իրականացվի (աղբահանությունն, օրինակ, թեկուզ ոչ կանոնավոր, բայց կատարվում է)՝ միայն քաղաքակիրթ պայմաններով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

## ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ



Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Միքայելի Գեղամյանը:

Գուրգեն Գեղամյանը ծնվել է 1930 թ. մայիսի 30-ին Խանլար քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1948 թ.: 1949 թ. Գ. Գեղամյանն ընդունվել եւ 1954 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1954 թվականից աշխատել է Թումանյանի (Ալավերդու) շրջանի Մղարթ գյուղում՝ որպես դպրոցի տնօրեն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատել է պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող (1967 թվականից), առաջատար գիտաշխատող (1974 թվականից), բաժնի վարիչ (1994-2005 թթ.), գլխավոր մասնագետ (2005 թվականից): 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը 1953-1958 թթ.» թեմայով: Նրա դոկտորական ատենախոսությունը (1980 թ.) նվիրված էր Խորհրդային Հայաստանի 1920-ական թթ. սկզբի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական հիմնախնդիրներին («Նէպ-ը եւ սոցիալ-տնտեսական փոփոխությունը Հայաստանում»): 1981 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Գեղամյանը 1980 թվականից պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ էր: Համատեղության կարգով հայոց պատմություն էր դասավանդում ԵՊՀ-ում, ճարտարագիտական եւ Հ. Աճառյանի անվան համալսարաններում:

Մի շարք մենագրությունների հեղինակ էր, որոնցից են՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխությունը Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1922-1936 թթ.) մինչեւ 1974 թ»., «Սոցիալ-դասակարգային փոփոխությունը Սովետական Հայաստանում 60 տարում» (Ե. 1982 թ.) եւ այլն: Գեղամյանը 60-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության» դպրոցական եւ բուհական դասագրքերի ստեղծման աշխատանքներին:

Գուրգեն Գեղամյանը վայելում էր մեծ սեր ու հարգանք ինչպես մասնագետ-պատմաբանների, դասախոսների, այնպես էլ հասարակության ամենալայն շրջաններում: Նա հմուտ պատմաբան էր, ինքնատիպ դասախոս, հրաշալի գործընկեր: Պրոֆ. Գեղամյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հայ պատմաբանների սրտերում:

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ*

# Հայ դատը մեր ընդհանուր դատն է

*3-րդ էջից*

Այստեղ կցանկանայի կանգ առնել Սփյուռքի համար մեկ ընդհանուր խնդրի վրա: Եվ սկսեմ կենդանի օրինակից: Ռայթի քաղաքապետին այցելելուց բառացիորեն մեկ ժամ առաջ եղանք Ալեքսանդր-Իզաբելլա (ՀԲԸ Միություն) հայկական դպրոցում: Մի ժամանակ այստեղ սովորել են մինչեւ հարյուր երեխաներ: Քանզի դպրոցը կառուցվել էր մի թաղամասում, որը հոծ բնակեցված էր բավական մեծ թվով հայերով: Համարյա բոլորը տեղափոխվել են այլ շրջաններ, մասնավորապես՝ Ռայթ: «Ալեքսանդր» դպրոցը (համառոտ այդպես են կոչում) համարյա դատարկվեց: Հիմա արդեն հեռու է շատերի համար: Հինգ շենք, որտեղ մեկ հերթով կարող էին երկու հարյուր աշակերտներ սովորել: Ունի հինգ ակր հողատարածք, սպորտհրապարակ, մարզադահլիճ: Սամվել Կարապետյանի հետ երկար զրուցեցինք դպրոցի տնօրեն Մանուկ Դեմիրճյանի հետ: Եկել է Բեյրութից: Նախնիները Կիլիկիայից են: Ընդամենը երեսուն աշակերտ ունի:

Պետությունն օգնում է դպրոցին: Բացի ամենայնից, նաեւ ամբողջ հինգ ավտոբուս է հատկացրել Մեծ Սիդնեյի տարբեր շրջաններից երեխաներ տեղափոխելու համար: Բայց իրոք այնպես է ստացվել, որ դպրոցը «գծից դուրս» է մնացել: Ոչ միայն կենտրոնից, այլեւ հայերով հոծ բնակեցված շրջանից այստեղ հասնելը մեկ, նույնիսկ երկու ժամ է խլում: Երեսուն աշակերտի առկայությամբ լիարժեք դպրոց չի կարող լինել: Վերջիվերջո, ուսուցիչներն էլ, ինչպես հաշվելու լինենք, առնվազն պետք է երեսուն հոգի լինեն: Մենք եղանք նաեւ Համազգային (դաշնակների) դպրոցում, որտեղ մինչեւ երեք հարյուր երեխաներ են սովորում: Տրամաբանությամբ թելադրված բնական գաղափար ծագեց դրանք միավորելու վերաբերյալ: Համազգայինի տեղադրման աշխարհագրությունը նույնիսկ չափազանց հարմար է բազմաթիվ հայրենակիցների համար, այդ թվում նաեւ նրանց, ովքեր իրենց երեխաներին տվել են «Ալեքսանդր» դպրոց: Եվ ահա երկար տարիներ հարցը չի լուծվում: Մանուկ Դեմիրճյանը շատ հստակ է գիտակցում, որ այն անհրաժեշտ է լուծել: Ես սկսեցի հետաքրքրվել: Հավերժական, անմիտ, անհեթեթության հասցված փաստարկ: Անհարմար է, եթե չասենք՝ ահավոր այն բարձրաձայն ներկայացնելը. «Չենք ուզում, որ մեր երեխաներին դաշնակցության գաղափարներ քարոզեն»: Կասեմ, լինելով ո՛չ դաշնակ, ո՛չ հնչակ, ո՛չ ռամկավար: Ավելի ճիշտ՝ լինելով ե՛ւ դաշնակ, ե՛ւ հնչակ, ե՛ւ ռամկավար. աշխարհում ոչ մի տեղ չեմ տեսել ու լսել նման բան: Այնինչ ամենուր հայկական դպրոցներ եմ այցելել բոլոր հինգ մայրցամաքներում: Դրանք հայկական դպրոցներ էին, եւ վե՛րջ: Ինչ վերաբերվում է դաշնակցական, կամ էլի ինչ-որ կուսակցական գաղափարախոսության, ապա անձամբ ինձ հասկանալի չէ, թե ինչի մասին է խոսքը: Եթե Հայ դատի, ապա չեմ կարծում, թե Դաշնակցություն կուսակցությանն է սեփականաշնորհված հայոց ազգային խնդիրը, որը թե՛ ռամկավարների, թե՛ հնչակների, թե՛ ողջ ժողովրդի խնդիրն է:

Հայ դատը վերջ ի վերջո նաեւ տարածքի հարց է (հայերի պատմական հայրենիքի), պատերազմական տուգանքների, ապօրինի գրավված գույքի վերադարձման հարց: Մի հիանալի եւ շատ մտերիմ ընկեր ունեի Գերսամ Ահարոնյան անունով: Լիբանանում Ռամկավար-ազատականի առաջնորդներից էր, հիրավի մարտական «Զարթօնք» թերթի խմբագիրը: Վաղուց արդեն մեզ հետ չէ: Աստված հոգին լուսավորի: Բայց նա խոր հետք է թողել մեր պատմության մեջ: Այդ նա էր (բնականաբար, դաշնակների եւ հնչակների հետ) նախաձեռնել եւ կազմակերպել համազգային, համաժողովրդական, միջազգային հուշահամալիրը՝ «Հայոց ցեղասպանության հիսուն տարին»: Եվ 1966 թվականին նա՝ Գերսամը հրատարակեց 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի ողբերգական իրադարձությունների փաստաթղթերի հիմնավոր ժողովածուն: Ահռելի հատորն այդպես էլ վերնագրված էր՝ «Հուշամատեան Մեծ եղեռնի»: Ներկայիս սերունդը դժվար թե իմանա, որ մինչեւ 1965 թվականը Հայկական ԽՍՀ-ում քչերը գիտեին հայերի ցեղասպանության մասին, այն մասին, թե ինչու հենց 1915 թվականի ապրիլի 24-ը դարձավ հայ ժողովրդի ողջ ողբերգությունը, Թուրքիայի կողմից պետական քաղաքականության աստիճանի բարձրացված եւ 1893 թվականից մինչ 1923-ը ձգված ամբողջ ցեղասպանությունը խորհրդանշող պաշտոնական տարեթիվը: Եվ կոչնակն ամենից ուժեղ հնչեցրեց ողջ Սփյուռքը՝ քաղաքական կուսակցությունների գլխավորությամբ, 1965 թվականին: Եվ ես, օրինակ, երբեք մեղք չեմ վերցնի հոգուս հակադրելու հայկական որեւէ քաղաքական կուսակցություն մեկ ուրիշին: Դա հավասարապես վերաբերում է նաեւ Հայաստանի Կոմունիստական կուսակցությանը, որը հակառակ ստալինիզմի եւ նեոստալինիզմի մղձավանջներին, կարողացավ ոչ միայն հասնել գիտության, մշակույթի, տնտեսության, ճարտարապետության, այլեւ ազգային ինքնագիտակցության վերածննդին, եւ սուլովյան չարաղետ գրաքննության պայմաններում գրքեր հրատարակել ցեղասպանության մասին ու հիրավի վեհ հուշահամալիր բարձրացնել Ծիծեռնակաբերդում: Եվ այդ ամենը, ինչպես ասում են՝ Ես եմ, Դու ես, Նա է, Մենք ենք, Մեր Ողջ Ժողովուրդը: Հայդատը մեր ընդհանուր դատն է: Հայ դատը ոչ մի դեպքում մեկ կուսակցության գաղափարախոսություն չէ: Դա մեր ժողովրդի այսօրվա ժամանակների գաղափարախոսությունն է: Ինչ վերաբերում է Դաշնակցությանը, ապա Քրիստափոր Միքայելյանի սերունդների ճակատն է պետք համբուրել նրա համար, որ կուսակցության ահռելի կառույցի երկար շղթայում կա այդ գործող ու գործուն օղակը: Ճիշտ է, այստեղ մի վտանգ կա. Աստված չանի ինքնանպատակ կենտրոնանանք միայն ու միայն այդ օղակի վրա, մոռանալով կենսական ռազմավարության փիլիսոփայության մասին: Քանզի հենց կյանքն է ցույց տալիս, որ նման դեպքերում ժողովուրդը կարող է կորցնել ժամանակի այս կամ այն հատվածի գերակայությունների զգացումը: Այնպիսի գերակայությունների, ինչպիսիք են անվտանգությունն ընդհանրապես եւ անվտանգության երաշխիքը՝ մասնավորապես: Բայց դա արդեն այլ թեմա է: Եվ դրան անպայման կվերադառնանք: Այդ հարցը Սփյուռքում ամենուրեք բարձրացվել է քաղաքական հուշագրով:

...Վերադառնանք ընդհատված թեմային՝ դպրոցի վերաբերյալ: Ռայթի քաղաքապետ Արթին Էթմեկջյանի ծրագրերում ներառված են եկեղեցու շինարարություն եւ դպրոցի շինարարություն այն շրջանում, որտեղ հոծ կերպով ապրում են տասը հազար հայեր՝ Ավստրալիայում նրանց քառասուն հազարի հասնող ընդհանուր թվից: Բարեբախտաբար, շրջանում հայ բնակչության ակտիվության շնորհիվ հույս կա, որ ապագա քաղաքապետը նույնպես կլինի մեր հայրենակիցը: Դա նշանակում է՝ հնարավորություն կա երկարաժամկետ ծրագրեր կառուցելու: Ի դեպ, ես լավ ծանոթ եմ այդ պաշտոնի ապագա թեկնածու Սարգիս Եդելյանին նույնպես: Հանդիպել ենք տասնինը տարի առաջ, Արցախյան պատերազմի տարիներին բարոնուհի Քոքսի ղեկավարած պատվիրակության այցելության ժամանակ: Ռայթի քաղաքապետարանից Սարգսի հետ ճանապարհվեցինք Հուշահամալիր-այգի, որտեղ տեղադրված են տարբեր ազգերի անմեղ զոհերի հուշարձաններ: Սարգիսն ակտիվ մասնակցություն էր հանդես բերել Հայոց ցեղասպանության զոհերի ավստրալիական քարի տեղադրման գործում: Շուտով վանդալները (նրանք ամենուր են, Ավստրալիայում՝ նույնպես) պղծեցին հուշարձանը եւ գողացան փորագիր քարը: Որոշ ժամանակ անց նույն տեղում նոր քար տեղադրվեց: Պարզվեց, որ գողացել են նաեւ ասորիների հուշաքարը: Իսկ մեկ օր անց տարան հայկական երկրորդ քարը նույնպես: Սարգիսը հարցազրույց տվեց մեր սրբապղծված հուշարձանի խորապատկերին: Նկարահանում էր մեր օպերատոր Սամվել Բաբայանը: Կարծում եմ, մինչ ես կգրեմ այս տողերը, մեր հայրենակիցները արդեն հուշահամալիր բերած կլինեն մի բազմատոննանոց քար: Ոչ ոք, ո՛չ հայերը, ո՛չ ասորիները, ո՛չ ավստրիացիները, ո՛չ ավստրալիացիները չեն կասկածում, թե ովքեր են եւ որտեղից են եկել այդ վանդալները: Հարց է բարձրացվել այգում հսկիչի հաստիք առանձնացնելու մասին:

...Սիդնեյում գտնվելու բոլոր յոթ օրերի ընթացքում մի րոպե չհանգստացանք: Շրջեցինք քաղաք-այգում ծայրեծայր, անցնելով ավելի քան հազար կիլոմետր: Անթիվ քանակով հանդիպումների ու միջոցառումների մասնակցեցինք: Երեք բլոկնոտ եմ լցրել գրառումներով: Ամեն ինչի մասին չես գրի: Բայց փորձով գիտեմ՝ ինչ-որ ժամանակ, այսպես թե այնպես այդ ամենն օգտագործելու եմ: Մի՞թե հետաքրքիր չէ, թե հայրենիքից այսպիսի հեռավորության վրա ինչպես են կազմակերպում կամ անցկացնում հարսանեկան արարողությունները: Ճիշտ է, հիմա արդեն դրանք ոչնչով չեն տարբերվում: Դարձյալ նույն սպիտակ, խարուխաշղթայի պես երկար կադիլակը, որով ինչպես միշտ բերում են գեղեցիկ, կարապի պես ձյունաճերմակ հարսին՝ մեր սերնդի կողմից արդեն մոռացության մատնված երկարազգեստ դեռահասի աղջիկների հուզիչ երամի ուղեկցությամբ: Հարսին կոչում էին Նաիրի, փեսային՝ Գեւորգ: Նա Հալեպից է, հարսը՝ Բաղդադից: Փեսայի հայրը ավտոմեխանիկ է, ունի սեփական լցակայան: Աղջկա հայրը՝ Եփրասը հայտնի լուսանկարիչ է: Եկեղեցում ասեղ գցելու տեղ չկար: Իհարկե, մեր հոգին հրճվում էր: Հայկական հարսանիքը միշտ էլ տոն է:

...**Ջիվան Պետրոսյան**: Հայաստանից է: Ողջ ընտանիքը գտնվում է Սիդնեյում: «Արմենիա»-ին նվիրեց բոլորովին նոր կախովի շարժիչ՝ մեր ռետինե նավակի համար: Մենք հիշում ենք, որ նախորդ շարժիչի հնամաշության պատճառով քիչ էր մնում զոհվեին անձնակազմի երեք անդամներ: Մեր այցելությունը զուգադիպեց նոր ռեստորանի բացմանը: Կասեք՝ ի՞նչ էլ մի իրադարձություն է, բայց չեմ կարող չընդգծել. ռեստորանը հայկական է, կոչվում է «Ռուսսկիե նոչի» եւ գտնվում է մասսոնական կենտրոնի դահլիճի տակ: Բա՛:

...Մեկ ժամից «Արմենիա»-ն կբարձրացնի կարմիր-կապույտ-նարնջագույն առագաստը, եւ մենք նորից արցունքներ կտեսնենք մեզ ճանապարհողների աչքերին: Եվ մեր դեմքերին էլ արցունքներ կլինեն: Իսկ առայժմ սպասում ենք, որ ուր-որ է կգա ինքը՝ Արաքս Մանսուրյանը, կբարձրանա տախտակամած եւ կերգի «Կռունկը»:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Խաղաղ օվկիանոս**

ԹԵՀՐԱՆ

# Խամենեին հաշտվել է Ահմադինեժադի հետ



**Իրանի բարձրագույն ղեկավար, այաթոլլահ Ալի Խամենեին աջակցություն է հայտնել երկրի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին եւ կոչ է արել հարթել կառավարող շրջանակներում առկա տարաձայնությունները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Այաթոլլահը խոստովանել է, որ Ահմադինեժադի ներկայիս կառավարությունն ունի թերություններ, որոնք, ի դեպ, չեն խանգարում բնականոն աշխատանքին: «Կառավարությունը եւ խորհրդարանը պարտավոր են օգնել միմյանց», հայտարարել է Խամենեին:**

**Ապրիլին հայտնի դարձավ, որ Իրանի խորհրդարանը մտադիր է սկսել նախագահ Ահմադինեժադի պաշտոնանկության գործընթաց: Արեւմուտքի լրատվամիջոցները պատգամավորների մտադրությունը կապեցին Ահմադինեժադի եւ Խամենեիի ենթադրյալ հակամարտության հետ:**

**Գերագույն հոգեւոր առաջնորդի եւ նախագահի փոխհարաբերությունների լարվածության հավանական պատճառը համարվում էր հետախուզության գործերի նախարար Հեյդար Մոսլեհիին հեռացնելու Ահմադինեժադի անհաջող փորձը: Նախագահի ճնշման ներքո նախարարն ապրիլին հրաժարական տվեց, բայց Խամենեիի որոշմամբ վերականգնվեց պաշտոնում:**

**Ենթադրյալ հակամարտությունը նոր զարգացում ստացավ մայիսի 20-ից հետո, երբ Ահմադինեժադը փորձեց ժամանակավորապես ստանձնել նավթարդյունաբերության նախարարի պարտականությունները, նախապես այդ պաշտոնից ազատելով Սեիդ Մասուդ Միրկազեմիին: Խորհրդարանին եւ Ալի Խամենեիին ենթակա Սահմանադրության պահապանների խորհուրդը անընդունելի համարեց դեպքերի նման զարգացումը եւ Ահմադինեժադին թույլ չտվեց ղեկավարել նավթարդյունաբերությունը:**

**Հարկ է նշել, որ իրենք՝ գործող անձինք, միշտ ժխտել են հակամարտության գոյությունը: Այսպես, Ահմադինեժադը Ալի Խամենեիին ոչ այլ կերպ, քան «հայր» է անվանում:**

# ՆԱՏՕ-ն ներողություն խնդրեց աֆղան երեխաների մահվան համար

*Կարզայի «վերջին նախազգուշացումը»*



**Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ուժերի հրամանատարությունը երեկ ներողություն է խնդրել երկրի հարավում շաբաթավերջին իրականացրած գործողության ժամանակ առնվազն ինը խաղաղ բնակիչների զոհվելու կապակցությամբ: ՆԱՏՕ-ի երեք գեներալների հայտարարության մեջ ասվում է, որ կոալիցիոն ուժերի նպատակը խաղաղ բնակչության մեջ զոհեր թույլ չտալն է: Սպիտակ տունն իր հերթին հավաստիացրել է, որ ԱՄՆ-ը հնարավոր ամեն ինչ կանի Աֆղանստանում խաղաղ զոհերը կանխելու համար:**

**Շաբաթ օրը ամերիկյան ծովային հետեւակի ռազմակայանի վրա թալիբների ձեռնարկած հարձակմանն ի պատասխան՝ ՆԱՏՕ-ի օդուժը Գիլմենդում հարվածել էր երկու տների: Ավելի ուշ պարզվել էր, որ ռմբակոծված տներում եղել են ոչ թե գրոհայիններ, այլ խաղաղ բնակիչներ: Աֆղանստանի իշխանություններին վկայակոչելով, Ինտերֆաքսը հաղորդում է, որ ՆԱՏՕ-ի հերթական ողբերգական սխալի հետեւանքով զոհվել են 2 կին եւ 12 երեխա: ՆԱՏՕ-ում պնդում են, թե զոհվել է 9 մարդ:**

**Գիլմենդի նահանգ գործուղված ՆԱՏՕ-ի քննիչների խումբը պետք է պարզի միջադեպի հանգամանքները:**

**Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը խստիվ դատապարտել է ՆԱՏՕ-ի օդուժի գործողությունները: Նրա խոսքերով, ինքը եւ իր կառավարությունը ԱՄՆ-ին քանիցս խնդրել էին դադարեցնել խաղաղ բնակիչների մահվան պատճառ դարձող ռմբակոծումները: Մայիսի 28-ի ողբերգական միջադեպի կապակցությամբ Կարզայը «վերջին նախազգուշացումն» է արել ՆԱՏՕ-ի ուժերին:**

**Պ. Ք.**

# Մալթան օրինականացրեց ամուսնալուծությունը

**Մալթայի բնակիչների մեծամասնությունը հանրաքվեի միջոցով արտահայտվել է ամուսնալուծությունների օրինականացման օգտին: Շաբաթավերջին անցկացված հանրաքվեի արդյունքների մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով երկրի վարչապետ Լոուրենս Գոնցիի հայտարարությունը:**

**Հանրաքվեից առաջ Գոնցին ծավալել էր ամուսնալուծությունների դեմ ուղղված քարոզչություն, բայց հիմա ասում է, որ պետք է հարգել մարդկանց կարծիքը, իսկ խորհրդարանը պարտավոր է ընդունել ամուսնալուծությանը վերաբերող օրենք: Այնտեղ գրված կլինի, որ ամուսինները կարող են բաժանվել, եթե 4 տարի ապրում են իրարից հեռու եւ հաշտության հնարավորություն էլ չկա:**

**Մալթան, որի բնակչության մեծամասնությունը կազմում են կաթոլիկները, Եվրոպայի միակ երկիրն է, որտեղ ամուսնալուծությունն առայժմ արգելված է: Մալթայի հանրաքվեից հետո աշխարհում մնում է ամուսնալուծությունն արգելող միայն մեկ երկիր՝ Ֆիլիպինները: Մինչեւ 2004 թ. համանման արգելք գործում էր նաեւ Չիլիում:**

# Մշակույթ

## «Գոհարի» աննախադեպ համերգը նվիրված Հանրապետության օրվան

Շուրջ տասը տարվա պատմություն ունեցող Գյումրիի «Գոհար» երաժշտանոցի ու «Գոհար» սիմֆոնիկ նվագախմբի ու երգչախմբի հաջողություններին **«Ազգը»** տարբերաբար անդրադառնում է: Լիբանանահայ գործարար երեք եղբայրների՝ **Հարութ**, **Շահե** եւ **Նառ Խաչատուրյանների** երազանքը, սիրելի մայրիկի՝ Գոհարի անունով ստեղծել երգչախումբ եւ երաժշտանոց, իրականացավ տարիներ առաջ, կիպրահայ ճանաչված երաժիշտ եւ խմբավար **Սեպուհ Աբգարյանի** նվիրյալ ջանքերի շնորհիվ: Կարճ ժամանակ անց Գյումրիի «Գոհար» երգչախմբի համբավը տարածվեց աշխարհով մեկ ու հեղեղի պես հրավերները թափվեցին մաեստրոյի գլխին: Ամեն համերգ, մանրակրկիտ ծրագրում ու ղեկավարում էր **Հարութ Խաչատուրյանը**: Մյուս եղբայրները սիրով միանում էին առաջարկին ու երգչախմբի հետ բոլոր երկրներում՝ ԱՄՆ-ը (8 քաղաք), Կանադա, Կիպրոս, Պոլիս, Մոսկվա, Հալեպ, Երեւան, Բեյրութ, կիսում էին նրանց հաջողությունները ու նոր ծրագրեր, նոր համերգներ ղեկավարում: Օտարերկրյա բոլոր համերգների ծախսերը Խաչատուրյան ընտանիքն է հոգում, իսկ համերգից գոյացած հասույթը ամբողջովին տրամադրվում է հայկական վարժարաններին: Ամիսներ առաջ Բեյրութում կայացած համերգից գոյացած 100.000 դոլարը, օրինակ, հավասարապես բաժանվել է տեղի կարիքավոր ազգային վարժարաններին եւ ուսուցիչներին:




Իսկ այն, ինչին ականատես եղանք մայիսի 28-ին Երեւանի Օպերայի հրապարակում աննախադեպ համերգ էր: Տոնահամերգը նվիրված էր Հանրապետության օրվան եւ մեզանում անկախացումից հետո եզակի բարձրաճաշակ մատուցում էր: Հայաստանի երաժշտական խայտաբղետ շոուներից, ամենօրյա նորաբույս «աստղերից» հոգնած մեր ժողովուրդը հնարավորություն ունեցավ հեռուստատեսությամբ դիտել այդ բարձրաճաշակ շոուն՝ «Գոհար» սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի եւ հայ էստրադայի ընտրյալ երգիչ-երգչուհիների մասնակցությամբ: Շուրջ 7000 հրավիրյալներ , որի շուրջ կեսը տեղավորվել էր հատուկ պատրաստված տրիբունաների վրա:

**«Ազգը»** հանդիպեց Խաչատուրյան ընտանիքի տարբեր անդամների հետ՝ որոշ մանրամասներ ներկայացնելու ընթերցողներին: Շուրջ վեց ամիս 185 երաժիշտների հետ աշխատել է մաեստրոն՝ Սեպուհ Աբգարյանը: 135 երաժիշտներ Գյումրիից են եկել, պատմում էր մաեստրոն, 5-ը՝ Երեւանից, դրան գումարած նաեւ 15 երգիչներն ու 15 պարողները: «Երգող աստղերի հետ մի քանի փորձ ենք արել, անգամ կային երգիչներ, որ միայն համերգի ընթացքում մեզ միացան, պատճառը նրանց խիստ զբաղված գրաֆիկն էր»: **«Ազգի»** հարցին պատասխանելով մաեստրոն ասաց. «Կատարողականը գոհացրեց, որովհետեւ ժողովուրդը իսկապես ցնցված էր այդ հրաշքից, ինչին ականատես եղանք: Իսկ այդ ամենի համար երախտապարտ ենք մեր հովանավորներին, որոնց աջակցությամբ էլ կարող ենք մեր տաղանդի սահմանները ընդարձակել»: Առիթն օգտագործելով մաեստրոն մաղթեց, որ հայրենի հասարակությանը թույլ չտա, որ այս առիթը հօդս ցնդի եւ շարունակի վերադարձը հայկական երգի ակունքներին՝ Կոմիտասյան ըմբռնումով: Սեպուհ Աբգարյանը տկն Գոհարին եւ իր երեք զավակներին, հատկապես Հարութին, մաղթեց ուժ ու կորով ու հետագա համատեղ նոր ծրագրերի իրականացում: Երեւանյան աննախադեպ համերգը սկզբից մինչեւ վերջին նախապատրաստական աշխատանքները՝ հագուստներ, սարքավորումներ, տրիբունաներ, հրավիրատոմսեր, անձրեւանոցներ, Կիլիկիայի թագավորության դրոշներ, «Նոյյան Տապանի» անիմացիոն կադրերը, երաժիշտների վարձավճարներն ու էլի շատ ու շատ բաներ Հարութ Խաչատուրյանն անձամբ է հոգել ու արդյունքը հրաշալի էր՝ անմոռանալի 2 ժամ, որը դեռ շատ երկար կմնա մեր հիշողության մեջ:

Անչափ հուզված էր տկն Գոհարը եւ **«Ազգի»** հետ զրույցում ասաց. «Ամեն անգամ զավակներս ինձ անակնկալ են մատուցում: Պարզապես չեմ կարող նկարագրել ստացած տպավորություններս, բառեր չեմ գտնում: Համերգից հետո Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը տիկնոջ հետ, վարչապետ Տիգրան Սարգսյանը տիկնոջ հետ, շնորհավորեցին ու շնորհակալություն հայտնեցին զավակներիս ու ինձ նման բացառիկ համերգ պարգեւելու համար: Իսկ վեհափառ հայրապետն համերգն անվանեց «մեծասքանչ երեւույթ»: Մենք պետք ունենք նման մշակույթի արտահանման, որ աշխարհը լավ ճանաչի հային, հայկական մշակույթը, մեր զավակներն ու թոռները խոսին հայերեն ու մայրենին երբեք չմոռնան»:

Խաչատուրյան եղբայրները շուրջ 11 տարի համագործակցում են գերմանական հանրահայտ ձայնային «RALPH KESSLER», «CHIEF SOUND ENGINEER» կազմակերպությունների հետ, որոնց բարձր մասնագիտական ու պրոֆեսիոնալ աշխատանքը՝ լույս, ձայն, անիմացիա, ծրագրի պրոդյուսեր Սեւակ Սերոբյանի օժանդակությամբ, ի մի են բերվել եւ ստեղծել հեքիաթային պատկերներ Հայաստանի օպերայի շենքի վրա: Հայաստանյան «Դոմինո» ընկերությանը (տնօրեն Արամ Հարությունյան) հետ համատեղ նրանք կարողացան Հանրապետության օրը ոչ միայն դարձնել տոնական, այլեւ անմոռանալի: Այդ գիշեր օպերայի շենքը մեր աչքում հառնեց իր ողջ Թամանյանական շքեղությամբ: Մինչեւ Հանրապետության հրապարակ հասնող Հյուսիսային պողոտան, որտեղ աջ ու ձախ մասերում տեղադրված էին մեծ էկրաններ, բազմամարդ էր եւ բոլորը իսկապես տոնական տրամադրություն էին վայելում:

Ահա այսպես պետք է կազմակերպել համերգներ... Իսկ երբ ներկաները երկարատեւ ծափերով, ծածանվող դրոշներով վանկարկում էին «Գոհար», «մաեստրո» ու պահանջում կրկին նվագել, մեծ ու մանուկ խմբված պարում էին, երգում եւ երազում, թե մեկ էլ երբ նման հրաշքի ականատես կլինեն: Նախաձեռնությունը Աստվածահաճո գործ էր, որն իրականացավ:

Վարձներդ կատար...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԲԱՆԱՎԵՃ

## «Նախ անհրաժեշտ է տարբերել փառատոնը թատերական ստուգատեսից»

**Հայաստանում հաճախ կազմակերպվող տարաբնույթ փառատոները թեեւ որոշ արվեստաբաններ ու մշակույթի գործիչներ խանդավառությամբ չեն ընդունում, այնուամենայնիվ անկախ թերացումներից՝ փառատոներն ակտիվացնում են հայաստանյան, հատկապես երեւանյան, մշակութային կյանքը:**

**Մշակութաբան, լրագրող Նվարդ Ասատրյանի խոսքով՝ վերջին 2 ամսում Հայաստանում 10 փառատոն է անցկացվել, իսկ թատերագետ Լեւոն Մութաֆյանը նշեց, որ միայն թատերական փառատոները 4-ն են եղել: Երեկ «Հայելի» ակումբում անդրադառնալով փառատոների առավելությանը՝ Լեւոն Մութաֆյանը նշեց, որ դրանք հնարավորություն են տալիս համագործակցության. «Փառատոնը նաեւ ստուգատես է բացահայտելու ներքին կուտակումները: Փառատոների դրական կողմերից մեկն էլ այն է, որ ձեւավորվում է թատերական մթնոլորտ, ինչն, ըստ թատերագետի, ցրում է կարծիքները, թե մեզանում թատերական արվեստը մեռնում է:**

**Թատերագետը նաեւ կարծիք հայտնեց, որ փառատոն բառն այսօր շահարկվում է, նրա խոսքով՝ ամեն մի թատերական ստուգատես հիմա փառատոն են կոչում: Հարկավոր է նախ սահմանազատել դրանք: «Օրինակ՝ «Արտավազդը» փառատոն չէ, դա ընդամենը դիտումների շարք է», ասաց Լեւոն Մութաֆյանը՝ ընդգծելով, որ որոշ մասնակիցների ու բեմադրիչների համար փառատոները դարձել են ինքնաբավ ու ինքնանպատակ. «Պետք է գործի հետեւյալ սկզբունքը՝ յուրաքանչյուր փառատոն պետք է ունենա իր գաղափարախոսությունը, մինչդեռ գաղափարախոսության հարցում առայժմ թերացումներ ու բացթողումներ ունենք»:**

**Թեեւ Լեւոն Մութաֆյանը շեշտում է թատերական փառատոների թափթփված կողմերը, բայց միեւնույն ժամանակ առանձնացնում, որ մշակույթի նախարարությունը ստեղծագործական միությունների հետ վարում է ճիշտ քաղաքականություն: Ապա պարզաբանում է, որ ինքն ամենեւին էլ մշակույթի նախարարության ջատագովը չէ. «Այլ ճիշտ հակառակը՝ ես նախարարության մեծագույն հակառակորդներից եմ, սակայն այս դեպքում նախարարությունն, իսկապես, աջակցում է փառատոների կազմակերպմանը»:**

**Նվարդ Ասատրյանն էլ առանձնացրեց «Թատրոն X» փառատոնը, որը նախաձեռնել է մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Նվարդ Ասատրյանը նշեց, թե մտածել է «Թատրոն X»-ը կձախողվի, բայց ինչպես տեսնում ենք՝ փառատոնը չի ձախողվել:**

Ի. Պ.

## Դուդուկը ապագա ունի Ֆրանսիայում

**Այս տարվա գարունը Ֆրանսիայում նշանավորվեց կարեւոր երաժշտական իրադարձությամբ՝ մի երիտասարդ հայ դուդուկահար, դժվար մրցույթը հաղթահարելով, ստացավ պետական երաժշտական դպրոցներում դասավանդելու վկայագիր: Վերջինս շնորհվեց Կովկասի ավանդական երաժշտության ոլորտում դուդուկի մասնագիտության համար: Դուդուկը Ֆրանսիայում ուսուցանվող երաժշտական գործիքների շարքում արդեն իր պատվավոր տեղն է զբաղեցնում ջութակի, դաշնամուրի, կլարնետի կողքին:**



**Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ բազմաթիվ երկրների երաժշտությունը ներկայացնող մոտ երկու հարյուր թեկնածուներից միայն 9 հոգի ստացան երաժշտության դասավանդման վկայագիր: Ջիվան Գասպարյանի, Լեւոն Մինասյանի նման նշանավոր դուդուկահարների եւ մի շարք ֆիլմերի երաժշտության շնորհիվ դուդուկն արդեն ծանոթ է Արեւմուտքի հանրությանը, բայց պաշտոնական կրթության ոլորտում դուդուկի ճանաչումը կարեւոր փուլ է:**

**Վերոհիշյալ մրցույթում դուդուկի գծով դափնեկիր դարձած հայ երիտասարդը Լեւոն Շատիկյանն է: Նա ծնվել է Աշտարակում, ավարտել Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դուդուկի դասարանը: 2005-ից դասավանդում է Ֆրանսիայի Ռոման քաղաքի կոնսերվատորիայի ստուդիաներից մեկում:**

**2011-ի ապրիլի սկզբներին Ռոմանում տեղի ունեցավ երաժշտական ավանի հիմնարկեքը, որի բացումը նախատեսված է 2012-ի վերջերին: Մրցույթում հաղթած Լեւոն Շատիկյանին այս կապակցությամբ վստահվել է Կովկասի ավանդական երաժշտության (Ֆրանսիայում նոր մասնագիտություն) բաժնի ստեղծումն ու ղեկավարումը: Լեւոնն ամուսնացած է, ունի երկու որդի: Նրա պարտականությունն է զարգացնել դուդուկի դասավանդումը, որն արդեն իսկ մեծ հետաքրքրություն է առաջացրել մասնագիտական միջավայրում: Այսպես, կլարնետահարներին եւ հոբոյահարներին հետաքրքրում են դուդուկի հնչունային յուրահատկությունը եւ անընդհատական շնչառության տեխնիկան:**

Պ. Ք.

## «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ՝ Վաչագան Սարգսյանին

Կիրթ եւ գրագետ սերունդ ունենալը պայմանավորված է դպրոցով, իսկ դպրոցն էլ պետք է հագեցած լինի նոր գրականությամբ եւ որակյալ դասագրքերով: Այս հարցում մեծ ավանդ ունի մանկավարժ, գրող, հրատարակիչ, «9-րդ հրաշալիք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր **Վաչագան Սարգսյանը**, ում ծննդյան 60-ամյակը եւ հեղինակած վերջին գրքերի՝ «Ներկայություն (Կենսամատենագիտություն)», «Հանելուկներ», «Երկու հեքիաթ», «Ասույթներ», «Զվարթ տրամաբանություն» (համահեղինակ՝ Գեւորգ Գեւորգյան), «Երկրաչափություն մանուկների համար» (համահեղինակ՝ Մարինե Մանուկյան), շնորհանդեսը տեղի ունեցավ Հայաստանի Ազգային գրադարանում: «Կենսամատենագիտությունը» խմբագրել է ՀԱԳ փոխտնօրեն **Ռաֆիկ Ղազարյանը**: Բացելով միջոցառումը՝ նա խոսեց Վ. Սարգսյան գրողի, հրատարակչի, մշակութային գործչի մասին, ով արտաքինից թվում է, թե շատ համեստ է, սակայն իրականում մարտնչող, հայրենիքի հոգսերով ապրող մտավորական է:

Այս կարծիքն արտահայտեց շնորհավորական խոսքում նաեւ ՀԱԳ տնօրեն **Դավիթ Սարգսյանը**, որը Վ. Սարգսյանին բնութագրեց որպես հայ ժողովրդի, մշակույթի լուռ եւ խոնարհ ծառայի: Գրական, մանկավարժական գործունեության համար եւ ծննդյան 60-ամյակի առթիվ Դ. Սարգսյանը հոբելյարին պարգեւատրեց «Հակոբ Մեղապարտ» մեդալով:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր **Հովհաննես Այվազյանը** խոսեց Վ. Սարգսյանի դասագրքաշինության մասին՝ զուգահեռներ անցկացնելով Ղազարոս Աղայանի միջեւ, ով նույնպես գրել է հայերենի դասագրքեր:



Բանաստեղծ Ռոմանոս Սահակյանն էլ նշեց, որ Վ. Սարգսյանը երեխաների մեջ սերմանում է հայրենասիրությունը նույնիսկ թվաբանական խնդիրների միջոցով:

Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչ **Կարինե Ջիբուխչյանը** նույնպես շնորհավորեց Վաչագան Սարգսյանին, ներկայացրեց ինստիտուտի տնօրեն Կարինե Թորոսյանի շնորհավորական ուղերձը:

Վաչագան Սարգսյանին շնորհավորեցին գրող **Լիպարիտ Սարգսյանը**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կիրակոսյանը, երգիծաբան Հրանտ Հորիզոնը եւ ուրիշներ:

Ելույթներին հաջորդում էին տեսանյութերը, որոնք հատվածներ էին Վ. Սարգսյանի հեղինակային հաղորդումներից: Իսկ միջոցառման վարող Ռաֆիկ Ղազարյանն ընթերցեց Վ. Սարգսյանի հեղինակած ասույթներից:

Գրադարանի ցուցափեղկերում ներկայացված էին Վ. Սարգսյանի հեղինակած, կազմած, խմբագրած գրքերից:

ԳՈՀԱՐԻՆԵ ՋՈՒՀԱԿՅԱՆ

# «Բարսելոնը» չեմպիոնների խառակի գավաթակիր

Մեկամյա ընդմիջումից հետո իսպանական «Բարսելոնը» կրկին դարձավ չեմպիոնների գավաթակիր: Եվ կրկին իսպանական ակումբը վճռորոշ խաղում զգալի առավելությամբ հաղթեց «Մանչեսթր Յունայթեդին»: Ալեքս Ֆերգյուսոնի սաները միայն առաջին 10 րոպեներին կարողացան դիմադրել իրենց լավագույն հատկանիշները ու ստիպել «Բարսելոնին» մտածելու սեփական դարպասի պաշտպանության մասին: Դրանից հետո ողջ խաղի ընթացքում «Բարսելոնն» իր կամքն էր թելադրում մրցակցին, որի արդյունքը եղան Պեդրոյի, Մեսիի եւ Վիլյայի խփած 3 գոլերը: «Բարսելոնին» չընկճեց նույնիսկ Ռունիի խփած գոլը, որն առաջին խաղակեսում հավասարեցրեց հաշիվը:



«Բարսելոնը» մեկ անգամ եւս ապացուցեց, որ այսօր իրոք աշխարհի ուժեղագույն ակումբն է: Թիմը 4-րդ անգամ նվաճեց չեմպիոնների գավաթը եւ այս ցուցանիշով հավասարվեց հոլանդական «Այաքսին» ու Մյունխենի «Բավարիային»: Առավել հաճախ՝ 9 անգամ գավաթը նվաճել է Մադրիդի «Ռեալը», 7 անգամ պատվավոր մրցանակը տարել է «Միլանը», 5 անգամ էլ գավաթակիր է դարձել «Լիվերպուլը»:

Վճռորոշ հանդիպման մասին թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Խոսեպ Գվարդիոլա** («Բարսելոն»)- Ինձ մեծ պատիվ է ղեկավարել այսպիսի ֆուտբոլիստներին: Շնորհավորում եմ բոլորին, ովքեր աշխատեցին մեզ հետ: Այսօր մենք ավելի լավ խաղացինք, քան Հռոմի եզրափակիչում 2 տարի առաջ: Հատկապես հպարտ եմ, որ այսպիսի հիանալի ֆուտբոլ ցուցադրելով հաղթեցինք: Այսօր մենք ավելի շատ գոլային պահեր ստեղծեցինք ու ավելի լավ դրանք օգտագործեցինք:

«Մանչեսթր Յունայթեդը» բարձրակարգ ֆուտբոլ է ցուցադրում: Այսօրվա խաղից հետո ավելի եմ հիանում Ալեքս Ֆերգյուսոնով: 4 տարվա ընթացքում նրա թիմը 3 անգամ հանդես է եկել չեմպիոնների լիգայի եզրափակիչում: Ինձ համար մեծ պատիվ է, որ Ֆերգյուսոնը մեր թիմը համարում է լավագույնը Եվրոպայում: Իսկ Լիոնել Մեսին իմ տեսած ֆուտբոլիստներից լավագույնն է: Մենք բարձրակարգ ուրիշ ֆուտբոլիստներ էլ ունենք, սակայն առանց Մեսիի դժվար թե կարողանայինք բարձունքներ նվաճել: Մեսին ինքնատիպ ու անկրկնելի է: Հուսով եմ, որ նա մշտապես երջանիկ կլինի:

**Ալեքս Ֆերգյուսոն** («Մանչեսթր Յունայթեդ»)- Մենք հասկանում էինք, որ ուժեղ մրցակից ունենք եւ ծրագրել էինք խաղալ ուժերի լրիվ ներդրումով: «Բարսելոնն» իր փոխանցումներով խաղով պարզապես հիացրեց, իսկ Մեսիին վնասազերծել այդպես էլ չհաջողվեց: Ռունիի գոլը մեզ հույսեր ներշնչեց: Սպասում էի, որ ընդմիջումից հետո ավելի լավ կխաղանք, սակայն չստացվեց: Այսօր մենք մեր լավագույն խաղը չխաղացինք: Սակայն պարտությունը կարող է առաջընթացի սկիզբ դառնալ: Բարձրակարգ թիմերը փուլերով են զարգանում: Ներկայումս «Բարսելոնն» այն փուլում է, որ այսօր ամենաուժեղն է Եվրոպայում: Թե որքան թիմը կմնա գագաթնակետում, դժվար է ասել:

Մարզչական իմ գործունեության ընթացքում «Բարսելոնն» ամենաուժեղ մրցակիցն էր, որի հետ դժվար էր մրցելը: Այս խաղը մեզ համար կարող է ուսնակ ծառայել, ինչպես դա պատահեց 1994-ին, երբ «Բարսելոնը» մեզ ջախջախեց 4-0 հաշվով: Մեր առջեւ խնդիր է դրված տարեցտարի ավելի ուժեղ դառնալ: Մենք ընթանում ենք այդ ճանապարհով:

«Բարսելոնի» հաղթանակի շնորհիվ Իսպանիան չեմպիոնների գավաթի խաղարկություններում տոնած հաղթանակների քանակով շրջանցեց Իտալիային: «Ռեալն» ու «Բարսելոնը» միասին 13 անգամ են նվաճել չեմպիոնների գավաթը, իսկ իտալական ակումբները նման հաջողության են հասել 12 անգամ: 11 անգամ հաջողությունն ուղեկցել է անգլիական ակումբներին:

«Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին 12 գնդակով դարձավ չեմպիոնների լիգայի ավարտված խաղարկության լավագույն ռմբարկու: Նա կրկնեց Ռուդ վան Նիստելռոյի արդյունավետության ռեկորդը, որը 2002/03-ի չեմպիոնների լիգայի մրցաշարում 12 գոլ էր խփել: Մեսին 3-րդ տարին անընդմեջ դառնում է չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկու (2009-ին՝ 9 գոլ, 2010-ին՝ 8): Նման արդյունքի նախկինում հասել էին գերմանացի լեգենդար ռմբարկու Գերդ Մյուլլերը եւ ֆրանսիացի Ժան Պիեռ Պապենը:

Չեմպիոնների լիգայի եզրափակիչը «Մանչեսթր Յունայթեդի» հոլանդացի դարպասապահ Էդվին վան Դեր Սարի վերջին խաղն էր մեծ ֆուտբոլում: Նա դարձավ չեմպիոնների լիգայի եզրափակիչ հանդիպումների ամենատարեց մասնակիցը: Խաղի օրը վան Դեր Սարը 40 տարեկան 211 օրական էր: Մինչ այդ ռեկորդակիրը «Միլանի» ավագ Պաոլո Մալդինին էր, որը 2007-ի եզրափակիչ խաղում 38 տարեկան 331 օրական էր:

# «Ուլիսը» վերադարձրեց առաջնության առաջատարի իր դիրքը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 11-րդ տուրում արդյունավետ խաղով հատկապես աչքի ընկավ «Գանձասարը», որը Կապանում 5-0 հաշվով ջախջախեց «Արարատին»: Դա ՀՀ առաջնություններում «Գանձասարի» տոնած ամենախոշոր հաշվով հաղթանակն է: Մինչ այդ ամենախոշոր հաշվով հաղթանակը կապանցիները տոնել էին 2007-ին՝ 4-0 հաշվով պարտության մատնելով «Կիլիկիային»: «Գանձասարից» աչքի ընկավ 38-ամյա Արսեն Ավետիսյանը՝ 2 անգամ գրավելով արարատցիների դարպասը: Նա բարձրագույն խմբում խփած գոլերի թիվը հասցրեց 196-ի: Մեկական գնդակ խփեցին Արա Խաչատրյանը, Սարգիս Նասիբյանն ու Անդրանիկ Սարգսյանը:

Նախորդ տուրում «Փյունիկին» պարտվելուց հետո «Ուլիսը» զիջել էր առաջատարի դիրքը: Հաղթելով «Շիրակին», «Ուլիսը» կրկին հանգրվանեց 1-ին հորիզոնականում: Խաղի ելքը վճռեց Արամ Բարեղամյանի խփած միակ գոլը: Իսկ ահա երկրի չեմպիոն «Փյունիկը» չկարողացավ հաղթել «Բանանցին»: Թեեւ արդեն 13-րդ րոպեին Էդգար Մանուչարյանը բացեց հաշիվը՝ խփելով ՀՀ առաջնություններում հոբելյանական՝ 50-րդ գնդակը, սակայն հետագայում հաջողությունը զարգացնել փյունիկցիները չկարողացան: Իսկ ահա «Բանանցը» 2-րդ խաղակեսում Բետոյի հարվածի շնորհիվ փրկվեց պարտությունից: Ի տարբերություն մրցակիցների առաջին շրջանի հանդիպման, այս անգամ խաղը դիտարժանությամբ աչքի չընկավ: Ֆուտբոլիստները դանդաղ էին գործում, աչքի չընկան ագրեսիվ խաղով: Դա որոշ չափով մտահոգում է, քանի որ առջեւում Ռուսաստանի ընտրանու հետ ընտրական մրցախաղն է:

Համառ պայքար ծավալվեց մրցաշարային աղյուսակում հարեւաններ «Իմպուլսի» եւ «Միկայի» մրցավեճում: Հանդիպման ելքը վճռեց «Իմպուլսի» հարձակվող Զավեն Բադոյանի խփած միակ գոլը, որի շնորհիվ դիլիջանցիները հաղթեցին ու մրցաշարային աղյուսակում շրջանցեցին «Միկայի» ֆուտբոլիստներին:

11-րդ տուրից հետո առաջնությունում ընդմիջում է հայտարարվել, որի ընթացքում Հայաստանի ազգային եւ երիտասարդական հավաքականներն ընտրական հանդիպումներ կանցկացնեն:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ուլիս | 11 | 7 | 2 | 2 | 16-8 | 23 |
| 2. Գանձասար | 11 | 6 | 4 | 1 | 16-6 | 22 |
| 3. Փյունիկ | 11 | 6 | 3 | 2 | 20-12 | 21 |
| 4. Իմպուլս | 11 | 5 | 2 | 4 | 15-13 | 17 |
| 5. Միկա | 11 | 4 | 3 | 4 | 13-11 | 15 |
| 6. Շիրակ | 11 | 2 | 3 | 6 | 8-14 | 9 |
| 7. Բանանց | 11 | 1 | 5 | 5 | 12-18 | 8 |
| 8. Արարատ | 11 | 1 | 2 | 8 | 7-25 | 5 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 6 |
| Էդգար Մանուչարյան | «Փյունիկ» | 5 |
| Հովհաննես Գոհարյան | «Իմպուլս» | 4 |
| Նարեկ Բեգլարյան | «Միկա» | 4 |
| Զավեն Բադոյան | «Իմպուլս» | 4 |
| Արսեն Ավետիսյան | «Գանձասար» | 4 |
| Բրունո Կորեա | «Բանանց» | 4 |

ՇԱԽՄԱՏ

# Վիգեն Միրումյանն արժանացավ գլխավոր մրցանակին



**Գրոսմայստեր Վիգեն Միրումյանը հաղթող ճանաչվեց Չեխիայի Օռլովա քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում: Չեխիայում բնակվող եւ այդ երկիրը ներկայացնող հայ շախմատիստը 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր ու լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նույնպիսի արդյունքի հասած Ալեքսեյ Կիսլինսկուն: Ավարտական 3 տուրերում նա հաղթեց Վիկտոր Դմիտրենկոյին, հաշտություն կնքեց Ալեքսեյ Կիսլինսկու եւ Վլադիմիր Տալայի հետ: Ընդ որում վերջին տուրից առաջ Վիգենը 7 միավորով միանձնյա առաջատարն էր ու կես միավորով գերազանցում էր Կիսլինսկուն: Վերջինս 9-րդ տուրում հաղթեց Լուկաշ Կլիմային, իսկ Միրումյանը ոչ-ոքի խաղաց Տալայի հետ:**

**Վիգեն Միրումյանը գերազանց խաղաց մրցաշարում՝ մնալով անպարտելի: Նա տոնեց 6 հաղթանակ, 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի:**

# Տիգրան Պետրոսյանի գերազանց մեկնարկը

**Գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանը գերազանց է մեկնարկել Հնդկաստանում անցկացվող շախմատի մրցաշարում: Մեկնարկային 3 հանդիպումներում էլ հայ շախմատիստը հաղթանակներ է տոնել Դաս Արպանի, Ռահուլ Շեթի ու Միշրա Սվայամսի նկատմամբ: 3 տուրից հետո Պետրոսյանը նույնքան միավորով 13 մասնակիցների հետ գլխավորում է աղյուսակը:**

# Առյուծը Համահայկական 5-րդ խաղերի խորհրդանիշ



**Օգոստոսին Երեւանում կանցկացվեն Համահայկական 5-րդ խաղերը, որոնց սկիզբը դրվել է 1999-ին: Եթե 1-ին խաղերին մասնակցել էին 23 երկրների 62 քաղաքների մարզիկներ, ապա 2007-ին կայացած 4-րդ խաղերում հանդես են եկել 27 երկրների 94 քաղաքների ներկայացուցիչներ: Սա վկայում է Համահայկական խաղերի նկատմամբ Սփյուռքում եւ Հայաստանում աճող հետաքրքրասիրության մասին: Մարզաձեւերի քանակն էլ 7-ից հասել է 10-ի:**

**Այս մասին երեկ կայացած Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործկոմի ընդլայնված նիստում նշեց այդ կազմակերպության նախագահ Արմեն Գրիգորյանը: Նիստում քննարկվեցին Համահայկական 5-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման հետ կապված բազմաբնույթ հարցեր: Պետբյուջեով միջոցառման անցկացման համար հատկացվել է 80 մլն դրամ: Առաջարկ եղավ ավելացնել մարզաձեւերի քանակը՝ ընդգրկելով հանդբոլն ու բազկամարտը: Սակայն համապատասխան քանակի հայտերի բացակայության պատճառով առաջարկը մերժվեց, քանի որ մրցակարգի համաձայն տվյալ մարզաձեւի անցկացման համար նվազագույնը պետք է 5 երկրների 10 քաղաքների ներկայացուցիչներ հայտավորվեն:**

**Մրցումների գլխավոր մրցավար Եղիշե Դավթյանը ներկայացրեց 10 մարզաձեւերն ու անցկացման վայրերը: Ֆուտբոլի մրցաշարի հանդիպումները տեղի կունենան «Նաիրի», «Հրազդան», «Փյունիկի», Ավանի եւ Աբովյանի մարզադաշտերում: Մրցումների գլխավոր մրցավարն է Կարեն Նալբանդյանը: Բասկետբոլիստներին կհյուրընկալեն «Միկա», «Դինամո» եւ Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադահլիճները: Վոլեյբոլի մրցումները կանցկացվեն «Կիլիկիա» մարզադահլիճում: Սեղանի թենիսիստները կմրցեն ԲԿՄԱ-ի դահլիճում, իսկ թենիսիստները՝ «Ֆիտնես Օրանժ» մարզահամալիրի կորտերում: Բնականաբար, շախմատիստներին կհյուրընկալի շախմատի տունը: Բադմինտոնի մրցումները կանցկացվեն «Հրազդան» մարզադահլիճում, լողորդներն իրենց հարաբերությունները կպարզեն Դավիթ Համբարձումյանի անվան մարզադպրոցում: Ֆուտզալի մրցումները կանցկացվեն ճարտարագիտական համալսարանի մարզասրահում, իսկ թեթեւ ատլետները կմրցեն Արտաշատի մարզադաշտում: Առաջարկություն եղավ կանանց վոլեյբոլի մրցումների կիսաեզրափակիչ ու եզրափակիչ հանդիպումներն անցկացնել Ստեփանակերտում:**

**Որոշվեց թիմերի եւ մասնակիցների հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ հուլիսի 15-ը: Իսկ մասնակիցների վիճակահանությունը տեղի կունենա մրցումների մեկնարկից 5 օր առաջ՝ օգոստոսի 8-ին:**

**Համահայկական 5-րդ խաղերի բացման եւ փակման արարողությունների մասին բավական ընդարձակ տեղեկատվությամբ հանդես եկավ գլխավոր ռեժիսոր Արամ Սուքիասյանը: Բացման արարողությունը տեղի կունենա «Հանրապետական» մարզադաշտում օգոստոսի 13-ին, իսկ փակման արարողությունը կանցկացվի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:**

**Քվեարկությամբ ընտրվեց Համահայկական 5-րդ խաղերի խորհրդանիշը: Գործկոմի անդամներին էին ներկայացվել կատիկը, փիղը, նապաստակը եւ առյուծը: Առաջարկ եղավ ընդգրկել այդ ցանկում նաեւ արծիվը: Ձայների մեծամասնությամբ ընտրվեց առյուծը:**

# «Ինտերն» Իտալիայի գավաթակիր

**«Ինտերի» ֆուտբոլիստները դարձան Իտալիայի գավաթակիրներ: Հռոմում կայացած եզրափակիչ խաղում «Ինտերը» 3-1 հաշվով պարտության մատնեց «Պալերմոյին»: Հանդիպման հերոսը Էտո՛Օ-ն էր, որը դարձավ 2 գոլի հեղինակ: Ընթացիկ մրցաշրջանում «Ինտերը» 2-րդ տիտղոսը նվաճեց: Մինչ այդ թիմը դարձել էր աշխարհի թիմային առաջնության հաղթող: Ընդհանուր առմամբ մրցաշրջանն անհաջող էր «Ինտերի» համար, որը 5 տարի շարունակ երկրի չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո ուժեղագույնի կոչումը զիջեց «Միլանին», իսկ չեմպիոնների գավաթակրի լիազորությունները վայր դրեց քառորդ եզրափակիչում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Թաներ Աքչամն ու Ռեյմոն Գեւորգյանը` ռումինական լսարանին Հայոց ցեղասպանության մասին

Մայիսի 26-ին Բուխարեստի Տնտեսագիտական ակադեմիայի Մեծ սրահում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով, որին հատուկ հրավիրվել էին ցեղասպանության խոշոր մասնագետներ` Մասաչուսեթսի Քլարկ համալսարանի պրոֆեսոր **Թաներ Աքչամը** եւ Փարիզ-VIII Սեն-Դենիի համալսարանի պրոֆեսոր **Ռեյմոն (Հարություն) Գեւորգյանը**: Գիտաժողովին ներկա էին Ռումինիայի նախկին նախագահ Իոն Իլիեսկուն, ինչպես նաեւ ռումինական քաղաքական-հասարակական եւ գիտական շրջանակների ներկայացուցիչներ, հեռուստատեսությունը, մամուլը:




Հայաստանի ԱԳՆ հաղորդագրության համաձայն, «Հայաստան. Մի ժողովրդի ճակատագիր» խորագրով գիտաժողովը բացել է ռումինական Ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս **Դան Բերինդեյը**, հյուրերին ողջունել եւ ներկայացրել է սենատոր, Ռումինահայոց միության նախագահ **Վարուժան Ոսկանյանը**: Պատմաբան, վերջերս անգլերենով լույս տեսած «Հայոց ցեղասպանություն. Ամբողջական պատմություն» ստվարածավալ աշխատության հեղինակ Ռեյմոն Գեւորգյանը «Հայոց ցեղասպանություն. Ոչնչացում երկու փուլով, 1915-1916» զեկույցում անդրադարձել է հայերի արտաքսման եւ վերացման երիտթուրքական կառավարության հետեւողական քաղաքականությանը: Թուրք պատմաբան Թաներ Աքչամն իր «Ժխտողականությունը որպես ազգային անվտանգության հղացք» զեկույցի մեջ մեկնաբանել է արդի թուրքական կառավարության ժխտողական քաղաքականությունը եւ դրա բացասական հետեւանքները ներքին եւ արտաքին առումով:

Նույն օրը` կեսօրին Թաներ Աքչամը եւ Ռեյմոն Գեւորգյանը հրավիրվել են ռումինական TVR Info հեռուստակայան, ուր մոտ կեսժամանոց ուղիղ հաղորդման մեջ խոսել են ցեղասպանության իրականացման, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների մասին: Հաղորդումից առաջ ցուցադրվել է հեռուստատեսության պատրաստած փաստագրական նյութ Հայոց ցեղասպանության մասին:

Մայիսի 27-ին Թաներ Աքչամը եւ Ռեյմոն Գեւորգյանը հանդիպել են նաեւ Բուխարեստի համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոսական կազմի եւ ուսանողության հետ: Կեսօրից հետո Բուխարեստի Ռումինական գյուղի թանգարանում տեղի է ունեցել Թաներ Աքչամի «Ամոթալի ակտ. Հայոց ցեղասպանությունը եւ թուրքական պատասխանատվության հարցը» գրքի ռումիներեն թարգմանության ներկայացումը:

Հայոց ցեղասպանության եւ թուրքական ժխտողականության վերաբերյալ միջոցառումները կազմակերպվել էին Ռումինահայոց միության եւ Ռումինահայոց թեմի ջանքերով:

**Ա. Հ.**

# Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուսաբանող իտալերեն գրքերի շնորհանդես Իտալիայում

Ընթացիկ տարում Իտալիայում ՀՀ դեսպանության հովանու ներքո հրատարակվել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուսաբանող իտալերեն երկու գիրք` Էմանուելե Ալիպրանդիի «Ղարաբաղի իրավունքները. փոքր երկրի եւ մեծ ժողովրդի պատմություն» եւ պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի «Ղարաբաղի խնդիրը. փշոտ ճանապարհ դեպի ազատություն եւ անկախություն», որոնց շնորհանդեսը տեղի ունեցավ մայիսի 25-ին Իտալիայում ՀՀ դեսպանության եւ Իտալիայի Արտաքին գործերի նախարարության հովանու ներքո գործող Միջազգային Կազմակերպությունների Իտալական Ընկերության (ՄԿԻԸ) (Società Italiana per l°Organizzazione Internazionale-SIOI) համատեղ կազմակերպմամբ: ՄԿԻԸ հանդիսանում է Իտալիայի ԱԳՆ-ի համար դիվանագիտական տարբեր դասընթացներ կազմակերպող եւ իրականացնող ամենահեղինակավոր հաստատությունը:

Միջոցառմանը ելույթներով հանդես եկան Իտալիայում ՀՀ դեսպան **Ռուբեն Կարապետյանը**, երկու գրքերի հեղինակները` պրոֆ. **Նիկոլայ Հովհաննիսյանն** ու **Էմանուելե Ալիպրանդին**, ինչպես նաեւ հայագետ, պատմաբան **Մարկո Բայսը**: Միջոցառումը վարում էր հայտնի վերլուծաբան պրոֆ. Ալեսանդրո Պոլիտին:

Իտալիայում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը իր ելույթում մասնավորապես նշեց, որ «միջոցառումն ունի երկակի կարեւորություն` ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ ոչ միայն առաջին անգամ իտալերեն լեզվով գիտական նման աշխատանքներ հրատարակելու, այլեւ առաջին անգամ Իտալիայի ԱԳՆ ռազմավարական կենտրոնում Հարավային Կովկասի համար առանցքային նշանակություն ունեցող Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ միջոցառում կազմակերպելու տեսանկյունից»:

Դեսպան Կարապետյանը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բանակցային գործընթացը, ինչպես նաեւ այդ գործընթացում Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության դրսեւորումները: Նա հավելեց, որ «Արցախի անկախության միջազգային ճանաչումն անխուսափելի է»:

Այնուհետեւ ելույթ ունեցողները ներկայացրին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ծագման պատճառներն ու հակամարտության ընթացքը, ներկայիս կարգավորման գործընթացը, ինչպես նաեւ անդրադարձան Արցախի պատմությանն ու նրա հարուստ պատմամշակութային ժառանգությանը:

Միջոցառմանը, որը տեղի ունեցավ ՄԿԻԸ-ի նստավայրում, ներկա էին ընթացիկ դիվանագիտական դասընթացներին մասնակցող ուսանողներ, իտալացի եւ օտարերկրյա բարձրաստիճան դիվանագետներ, իտալական համալսարանների ու գիտական հաստատությունների ղեկավարներ, իտալահայ համայնքի ներկայացուցիչներ:

# Աբխազիային սպասում են արտահերթ նախագահական ընտրություններ

Աբխազիայի նախագահ Սերգեյ Բաղապշի քաղցկեղային հիվանդությունն ու արագ մահը մայիսի 29-ին շտապ իրականացված վիրահատությունից հետո երկիրը դրել են մի իրավիճակի մեջ, երբ հաջորդող երեք ամիսներին պետք է որոշվի նոր նախագահը, իսկ մինչ այդ Աբխազիայի նախագահի պաշտոնակատար, ըստ աբխազական սահմանադրության, կլինի ներկայիս փոխնախագահ Ալեքսանդր Անկվաբը:

Այս համատեքստում արդեն իսկ նախագահի հավանական թեկնածուների առկայությունը հետաքրքրական իրավիճակ է ստեղծում Աբխազիայում, որտեղ արտահերթ նախագահական ընտրությունները գրավել են Վրաստանի ուշադրությունը` հիմնական մեկնաբանությամբ կարծես հնարավորություն ստեղծելով «շտկելու» իրավիճակը:

Մյուս կողմից, տարբեր գնահատականների համաձայն, Աբխազիայի նախագահի մահը խնդրահարույց իրավիճակ է ստեղծել հենց Աբխազիայում, որը գրեթե անպատրաստ է քաղաքական վայրիվերումների: Ընդ որում, հիմնական մտահոգությունը կապված է այն հանգամանքին, որ Աբխազիայի նախագահի ձեռքերում կենտրոնացված զգալի իշխանությունն այս իրավիճակում մնացել է առանց այդ իշխանությունը կրողի, ինչը կարող է բերել առնվազն անկայունության:

Հետագա մի քանի օրերի ընթացքում, ըստ էության, հստակ կդառնա, թե Բաղապշի մահն իրականում ինչ հետեւանքներ կարող է ունենալ, ամեն դեպքում, ակնհայտ է, որ ռուս-վրացական հարաբերությունների նոր տուրն ամենամեծ հավանականությունն ունի, քանի որ կողմերից յուրաքանչյուրը կփորձի օգտագործել ստեղծված իրավիճակը` սեփական ազդեցությունը մեծացնելու կամ այդպիսին ձեւավորելու համար:

**Ա. Հ.**

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2011 1-ին եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Եռամսյակի սկիզբ** | | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,865,845,815.47 | ԱՄՆ | դոլար |
| այդ թվում` | | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,865,845,242.88 | ԱՄՆ | դոլար |
| որից` | | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 21,755,714.00 ՀՓԻ | 33,504,555.42 | ԱՄՆ | դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ | դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,165,960,546.40 | ԱՄՆ | դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,165,959,973.81 | ԱՄՆ | դոլար |
| **Եռամսյակի վերջ** | | | | |
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,823,443,175.87 | ԱՄՆ | դոլար |
| այդ թվում` | | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,823,442,611.95 | ԱՄՆ | դոլար |
| որից` | | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 19,873,717.00 ՀՓԻ | 31,509,871.35 | ԱՄՆ | դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ | դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,101,748,095.43 | ԱՄՆ | դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,101,747,531.51 | ԱՄՆ | դոլար |

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ուժը կորցրած է ճանաչվել «ԱԴԱԼԵՎ ՌԻԱ» ՍՊԸ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիան**

Մայիսի 24-ին Կենտրոնական բանկի խորհուրդը ուժը կորցրած է ճանաչել «ԱԴԱԼԵՎ ՌԻԱ» ՍՊԸ տրված դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության թիվ 14 լիցենզիան:

Սահմանվել է, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ընկերությունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիայի գործողության դադարեցումը ընկերության կողմից ստանձնած դրամական փոխանցումների պարտավորության կատարման հետ: Ընկերությունը դեպոնացված միջոցների հաշիվը վարող բանկում ունեցած դեպոնացված դրամական (փողային) միջոցներից կարող է օգտվել միայն սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:

**Թեքեյան մշակութային միություն**

## Մեծարանքի հանդիսություն

նվիրված

## Ժիրայր Դանիելյանի

ծննդյան 70 եւ գործունեության 50-ամյակին



Տեղի կունենա չորեքշաբթի, 2011 թ. հունիսի 1-ին, ժամը 17.00-ին, Թեքեյան կենտրոնի մեծ դահլիճում (Խանջյան 50):

Հանդիսության ավարտին տեղի կունենա գինեձոն` նվիրված մեծարյալի նորատիպ «Բանասիրութեան բաւիղներուն մէջ» գրքին:

*Սույն ծանուցումն ընդունել որպես անձնական հրավեր:*

## Հրավիրում ենք սովորելու

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի նորաբաց «ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» բաժնում:

**Դիմումներն ընդունվում են մինչեւ ս.թ. հունիսի 1-ը:**
**Տեղեկությունների համար զանգահարել**
**517-817 հեռախոսահամարով:**

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում**

## «Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 30.5.2011, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: